

24

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

2019

Luys



Lnyu



ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
(2018-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ)

ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացմանն ուղղված ՀՀ կառավարության գործունեության ուսումնասիրություն

(2018-2019թթ. ժամանակահատված)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՊԱՎՈՒՄՆԵՐ	1
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏՐՎԱԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ	4
ՀՀ կառավարության ծրագիր	4
«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր	4
ՄԱՍ 1. ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	5
ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ամփոփ նկարագիր	5
Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացում և մշտադիտարկում	7
ՄԱՍ 2. ԵՄ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ	44
ՄԱՍ 3. ՀՀ-ԵՄ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅԼԵՐ	54
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	57
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	58
Հավելված 1. Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով մոտարկման ենթակա ԵՄ հրահանգները, կանոնակարգերը և որոշումները	58
Հավելված 2. Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված կառույցները և նրանց գործառույթների ու դերի նկարագրությունը	88
Հավելված 3. ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի 18.11.2019 թվականի թիվ 09.13.5/11590-2019 գրություն	92

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ԳՀՀ	Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիր
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության (ԵՄ) հետ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հարաբերությունները սկսեցին զարգանալ Հայաստանի անկախության առաջին իսկ օրվանից, և այսօր ԵՄ հետ համագործակցությունը դարձել է Հայաստանի արտաքին քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Այս համագործակցության առաջին իրավական հիմքը դրվեց 1996թ. ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված և 1999թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրով (այսուհետ՝ ԳՀՀ), որը կնքվել էր 10 տարի ժամկետով¹: Համաձայնագիրը ընդգրկում էր համագործակցության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են քաղաքական երկխոսությունը, ժողովրդավարությունը և մարդու իրավունքները, առևտուրը և ներդրումները, օրենսդրական և մշակութային համագործակցությունը և այլն: Այս համագործակցությունը ենթադրում էր նաև համապատասխան ոլորտներում ՀՀ օրենսդրության մոտարկում ԵՄ չափանիշներին և իրավական կարգավորումներին:

ԵՄ հետ համագործակցությունը 2010-ին թևակոխեց հաջորդ շրջափուլ, երբ կողմերը մեկնարկեցին Ասոցացման համաձայնագրի ու դրա մաս կազմող Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունների գործընթացը²: Համաձայնագրի մշակման աշխատանքները ավարտվեցին 3 տարի անց, սակայն 2013թ. սեպտեմբերի 3-ին Եվրասիական տնտեսական միությանը միանալու մասին Հայաստանի հայտարարությունից հետո համաձայնագրի ստորագրումը կասեցվեց:

Հայաստանի և Եվրամիության համագործակցության նոր շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունները մեկնարկեցին 2015 թվականին, որն ավարտվեց 2017 թվականին Բրյուսելում ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրությամբ: Ստորագրությանը հաջորդեց համաձայնագրի վավերացման փուլը, որն ունի հետևյալ ժամանակագրությունը.

- 2018թ. ապրիլի 11-ին ՀՀ Ազգային ժողովը միաձայն քվեարկությամբ վավերացրեց համաձայնագիրը:
- 2018թ. մայիսի 16-ին Եվրոպական խորհրդարանի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը քվեարկությամբ հավանության արժանացրեց ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի սատարման բանաձևի և ՀՀ-ԵՄ հարաբերությունների վերաբերյալ հարակից բանաձևի նախագծերը:
- 2018թ. հուլիսի 4-ին Եվրոպական խորհրդարանի լիազումար նիստում վավերացվեցին վերոհիշյալ բանաձևերը:

¹ Ժամկետը լրանալուց հետո այն ինքնաբերաբար երկարաձգվել է՝ յուրաքանչյուր անգամ մեկ տարով:

² ՀՀ Նախագահի 2010 թվականի հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների համար պատասխանատու խորհուրդ և ոլորտային խմբեր ստեղծելու մասին» թիվ ՆԿ-115-Ա կարգադրություն (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=54966>):

- 2018թ. հունիսի 1-ից, համաձայն ՀԸԳՀ 385-րդ հոդվածի դրույթների, համաձայնագիրը ժամանակավորապես ուժի մեջ մտավ (մինչև ԵՄ անդամ երկրների խորհրդարանների կողմից դրա վավերացումը), և սկսվեց նրա դրույթների մասնակի կիրարկումը:

Թեև համաձայնագիրը պաշտոնապես չի մտել ուժի մեջ և դեռևս չի վավերացվել ԵՄ անդամ բոլոր երկրների կողմից³, այն արդեն իսկ կիրակվում է, և կարծում ենք՝ պետական մարմինների կողմից մշակվող ոլորտային քաղաքականությունը պետք է որոշ չափով հիմնվի նաև այս համաձայնագրով սահմանված դրույթների վրա ու ներառի երկրի ստանձնած հանձնառությունները: Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ կառավարության կողմից մշակված փաստաթղթերը, ծրագրերը և ռազմավարությունները, ինչպես նաև դրանց իրագործման նպատակով ԵՄ կողմից տրամադրվող աջակցության մեխանիզմները՝ համաձայնագրի կիրարկման ընթացքը և դրա հաշվետվողականությունը գնահատելու նպատակով:

³ Այսօր արդեն իսկ 17 երկիր վավերացրել է համաձայնագիրը և, ինչպես նույնների 26-ին հայտարարել է ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալը, ևս 5 երկրում վավերացման գործընթացը մոտենում է ավարտին:

ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏՐՎԱԾ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

ՀՀ կառավարության ծրագիր

ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ⁴ հաստատված ՀՀ կառավարության ծրագիրը ՀՀ-ԵՄ համագործակցության խորացման առումով չունի հստակ չափելի ցուցանիշներ, սակայն առկա ձևակերպումները հնարավորություն են տալիս, թեև ոչ ամբողջապես, գնահատել ՀՀ կառավարության գործունեությունն այս ուղղությամբ: Այդ ձևակերպումները ներկայացված են ծրագրի 2-րդ բաժնի (ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ) 2.3-րդ մասում (ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ):

«Կառավարությունն ակտիվորեն աշխատելու է՝

- ԵՄ-ի, նրա անդամ պետությունների և եվրոպական այլ երկրների հետ բարեկամական **հարաբերությունները խորացնելու և գործընկերությունն ընդլայնելու** ուղղությամբ: **Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) կիրարկումը դիտվում է որպես Հայաստանի զարգացմանն ուղղված Կառավարության բարեփոխումների օրակարգին նպաստող նշանակալից գործոն»:**

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Նմանատիպ ոչ չափելի ձևակերպում իր տեղն է գտել նաև «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում (Մաս 2. Արտաքին քաղաքականություն, «Արտաքին քաղաքականություն» բաժին, կետ 5)։

«5. քայլեր ենք ձեռնարկելու Եվրամիության հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի լավագույնս կիրարկման ուղղությամբ...»:

⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128281>

ՄԱՍ 1. ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ՀՀ կառավարության ծրագիր

Թիրախ 2. «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) կիրարկումը դիտվում է որպես Հայաստանի զարգացմանն ուղղված Կառավարության բարեփոխումների օրակարգին նպաստող նշանակալից գործոն:»

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Թիրախ 1. «...քայլեր ենք ձեռնարկելու Եվրամիության հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության **համաձայնագրի լավագույնս կիրարկման ուղղությամբ...**»

ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ամփոփ նկարագիր

ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ի նպատակներն են ամրապնդել կողմերի միջև համապարփակ քաղաքական և տնտեսական գործընկերությունն ու համագործակցությունը՝ հիմնված ընդհանուր արժեքների և սերտ կապերի վրա, այդ թվում՝ բարձրացնելով Հայաստանի Հանրապետության մասնակցությունը «Եվրոպական միության քաղաքականությանը, ծրագրերին և գործակալությունների աշխատանքներին»:

Համաձայնագիրը անչափ կարևոր գործիք է երկրի արդիականացման և եվրոպական լավագույն փորձին համապատասխան բարեփոխումներ իրականացնելու համար: Այն օգտակար է նաև Հայաստանի բոլոր քաղաքացիների և բիզնեսի համար, քանի որ ամրապնդում է համագործակցությունը մարդու իրավունքների և օրենքի գերակայության ոլորտներում, ինչպես նաև ներկայացնում է ԵՄ չափանիշները բազմաթիվ ոլորտներում՝ տրանսպորտ, էներգիա, շրջակա միջավայր, կրթություն, զբաղվածություն, առևտուր և ներդրումներ՝ հնարավորություն տալով ստեղծել ավելի բարենպաստ բիզնես միջավայր:

Համաձայնագրով կողմերը մեկ անգամ ևս վերահաստատել են ազատ շուկայական տնտեսության սկզբունքների, կայուն զարգացման, տարածաշրջանային համագործակցության և արդյունավետ բազմակողմանիության վերաբերյալ իրենց հանձնառությունը:

Ի թիվս ընդհանուր նպատակների ու դրույթների՝ համաձայնագիրը նախատեսում է նաև կողմերի պարտավորություններ, որոնք ներառում են մի շարք ոլորտներ: Այս համատեքստում կարևոր տեղ են զբաղեցնում ՀՀ օրենսդրության մոտարկման

աշխատանքները (մոտարկման ենթակա ԵՄ կանոնակարգերի և դիրեկտիվների ցանկը տե՛ս Հավելված 1-ում), որոնք ներառված են 7 հիմնական ոլորտներում.

- ✓ Տրանսպորտ – մաս 5, գլուխ 1, հոդված 36-41, ՀԸԳՀ հավելված I, մոտարկման ենթակա կանոնակարգեր ու հրահանգներ (դիրեկտիվներ)՝ 75;
- ✓ Էներգետիկ համագործակցություն – մաս 5, գլուխ 2, հոդված 42-44, ՀԸԳՀ հավելված II, մոտարկման ենթակա կանոնակարգեր ու հրահանգներ՝ 77;
- ✓ Շրջակա միջավայր – մաս 5, գլուխ 3, հոդված 45-50, ՀԸԳՀ հավելված III, մոտարկման ենթակա կանոնակարգեր ու հրահանգներ՝ 24;
- ✓ Կլիմային առնչվող գործողություններ – մաս 5, գլուխ 4, հոդված 54-56, ՀԸԳՀ հավելված IV, մոտարկման ենթակա կանոնակարգեր ու հրահանգներ՝ 6;
- ✓ Համագործակցությունը տեղեկատվական հասարակության ոլորտում – մաս 5, գլուխ 8, հոդված 62-65, ՀԸԳՀ հավելված V, մոտարկման ենթակա կանոնակարգեր ու հրահանգներ՝ 17;
- ✓ Սպառողների պաշտպանություն – մաս 5, գլուխ 14, հոդված 81-83, ՀԸԳՀ հավելված VI, մոտարկման ենթակա կանոնակարգեր ու հրահանգներ՝ 17;
- ✓ Զբաղվածություն, սոցիալական քաղաքականություն և հավասար հնարավորություններ – մաս 5, գլուխ 15, հոդված 84-90, ՀԸԳՀ հավելված VII, մոտարկման ենթակա կանոնակարգեր ու հրահանգներ՝ 44:

Հայաստան-Եվրոպական միություն ՀԸԳՀ ինստիտուցիոնալ շրջանակը

ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ VIII մասով սահմանվում են այն կառույցները (կառույցների մասին ավելի մանրամասն տե՛ս Հավելված 2-ում), որոնք պետք է ապահովեն համաձայնագրի իրականացումը, վերահսկողությունն ու կիրարկումը: Դրանք են.

- **Գործընկերության խորհուրդ** - բաղկացած է ԵՄ և ՀՀ նախարարական մակարդակով ներկայացուցիչներից և հանդիպում է պարբերաբար՝ տարին առնվազն մեկ անգամ: Այն ուսումնասիրում է համաձայնագրի շրջանակներում ծագած ցանկացած էական նշանակություն ունեցող հարց, ինչպես նաև ունի համաձայնագրի շրջանակներում որոշումներ ընդունելու լիազորություն: Այդ որոշումները պարտադիր են համաձայնագրի կողմերի համար, «որոնք պետք է ձեռնարկեն դրանց կիրարկման համար պատշաճ միջոցներ»:
- **Գործընկերության կոմիտե** – ստեղծվել է Գործընկերության խորհրդին իր գործառույթների և պարտականությունների կատարման հարցում աջակցելու համար: Այն կազմված է ՀՀ և ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով ընտրված ներկայացուցիչներից և հանդիպում է առնվազն տարին մեկ անգամ:

Գործընկերության կոմիտեն, առնվազն տարին մեկ անգամ հանդիպում է առևտրին առնչվող հարցեր քննարկելու նպատակով:

- **Ենթակոմիտեներ և այլ մարմիններ** - Գործընկերության խորհուրդը կարող է ստեղծել նաև Համաձայնագրի կիրարկման համար անհրաժեշտ ենթակոմիտեներ և այլ մարմիններ՝ սահմանելով դրանց կազմը, պարտականությունները և գործառույթները⁵:
- **Խորհրդարանական գործընկերության կոմիտե** - կազմված է մի կողմից՝ Եվրոպական խորհրդարանի անդամներից, մյուս կողմից՝ ՀՀ ԱԺ պատգամավորներից, նրանց համար ծառայում է որպես հանդիպումների և կարծիքներ փոխանակելու հարթակ: Խորհրդարանական գործընկերության կոմիտեն կարող է առաջարկություններ ներկայացնել Գործընկերության խորհուրդ:
- **Քաղաքացիական հասարակության հարթակ**, որը նպատակ ունի խթանել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների պարբերական հանդիպումները, ինչպես նաև նրանց տեղեկացված պահել համաձայնագրի կիրարկման վերաբերյալ, ապահովել նրանց համապատասխան ներդրումը: Այսօր, սակայն, այս հարթակի ձևավորման գործընթացն անհասկանալի է, ինչը բարձրաձայնվել է նաև Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի կողմից⁶ 2019 թվականի հունիսին:

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացում և մշտադիտարկում

Ինչպես արդեն նշվեց, 2018թ. հունիսի 1-ից, համաձայնագիրը ժամանակավորապես մտավ ուժի մեջ, և սկսվեց դրա մասնակի կիրարկումը: Համաձայնագրի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի 2018թ. հուլիսի 2-ի թիվ 906-Ա որոշմամբ⁷ ստեղծվեց ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և «ՀՀ-ԵՄ Գործընկերության առաջնայնություններ» փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովի նախագահը ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն է, իսկ կազմում հիմնականում ներկայացված են բոլոր գերատեսչությունների ներկայացուցիչները՝ գերատեսչության ղեկավարի տեղակալի մակարդակով ինչպես նաև Եվրոպական

⁵ Օրինակ՝ ՀՀ-ԵՄ Տնտեսական համագործակցության և հարակից այլ ոլորտների ենթակոմիտեի, որի անդրանիկ հանդիպումը կայացավ 2019թ. մարտին:

⁶

<https://eaparmenianews.wordpress.com/2019/06/19/%d5%a9%d5%b8%d5%b2%d5%a1%d6%80%d5%af%d5%b8%d6%82%d5%b4-289/>

⁷ <https://www.e-gov.am/decrees/item/18910/>

միությունում ՀՀ առևտրական կցորդը: Միջգերատեսչական հանձնաժողովի գործառույթներում նաև նախատեսվում են համաձայնագրով սահմանված առևտրատնտեսական ու ոլորտային համագործակցության շրջանակներում ԵՄ և դրա անդամ պետությունների հետ ՀՀ իրավասու մարմինների աշխատանքների համակարգում, ինչպես նաև Հայաստանի պետական կառավարման համակարգի մարմինների կողմից համաձայնագրի և փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումների իրականացման համակարգում: Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ⁸:

Հանձնաժողովի գործունեությունը, սակայն, կասկածի տեղիք է տալիս, քանի որ վերջինիս կազմը վերջին անգամ թարմացվել է 2019 թվականի փետրվարի 21-ին՝ ՀՀ վարչապետի թիվ 163-Ա որոշմամբ: Ու թեև դրանից հետո զգալի փոփոխություններ են կատարվել պետական կառավարման համակարգում, և որոշ մարմիններ դադարեցրել են իրենց աշխատանքը, իսկ Եվրոպական միությունում Հայաստանը չունի առևտրական կցորդ, հանձնաժողովի կազմը չի ենթարկվել փոփոխության: Այսինքն՝ այսօր հանձնաժողովի անդամ են հանդիսանում այնպիսի կառույցների ղեկավարներ, որոնց գործունեությունը վաղուց դադարել է (օրինակ՝ գյուղատնտեսության նախարարությունը): Փաստորեն, հանձնաժողովի աշխատանքներին կարող են մասնակցել անձինք, ովքեր այլևս չեն աշխատում տվյալ կառույցում և իրավունք չունեն ներկայացնելու տվյալ պետական մարմինը: Միաժամանակ, նիստերին կարող են մասնակցել (և հավանաբար մասնակցում են) անձինք, ովքեր ներառված չեն ցանկում՝ որպես տվյալ պետական մարմնի ներկայացուցիչ: Ավելին, ո՛չ ՀՀ կառավարության, ո՛չ էլ ՀՀ վարչապետի կայքում հնարավոր չեղավ գտնել կայացած նիստերի արձանագրությունները (առկա են միայն մամլո հաղորդագրություններ): Իսկ քանի որ ՀԸԳՀ դրույթները վերաբերում են հասարակությանը հետաքրքրող գրեթե բոլոր թեմաներին, կարծում ենք՝ ճիշտ կլիներ հանրությանը ներկայացնել համաձայնագրի իրականացման ընթացքի քննարկումների արդյունքները և նյութերը: **Այս ամենը, ցավոք, վկայում է համաձայնագրի իրականացման նկատմամբ վերահսկողության ոչ պատշաճ մակարդակի և/կամ ոչ թափանցիկ⁹ աշխատանքի մասին:**

Վերոհիշյալ հանձնաժողովի համակարգմանն էր վերապահվել նաև համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի մշակումը և ոլորտային մոտարկման գործընթացի իրականացումը: Համաձայնագրի ճանապարհային քարտեզը հավանության արժանացավ միջգերատեսչական հանձնաժողովի 2019 մայիսի 17-ի նիստում¹⁰, որից հետո այն հաստատվեց ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի

⁸ <https://www.e-gov.am/decrees/item/18910/>

⁹ Թեև համաձայն ՀՀ կառավարության ծրագրի՝ կառավարության համար առանցքային նշանակություն ունի «Կառավարության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը»:

¹⁰ <https://www.gov.am/am/news/item/13815/>

թիվ 666-Լ որոշմամբ¹¹: Ճանապարհային քարտեզը վերջնականորեն հաստատվեց 2019 թվականի հունիսի 13-ին՝ Բրյուսելում կայացած Գործընկերության խորհրդի երկրորդ նիստում:

Ճանապարհային քարտեզը ներկայացնում է համաձայնագրի կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումները, դրանց իրականացման ժամկետները, պատասխանատու մարմինները: Իսկ ՀՀ վարչապետի 2018 թվականի հուլիսի 2-ի թիվ 906-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը պատասխանատվություն է կրում ճանապարհային քարտեզի մշտադիտարկման համար:

Ինչպես արդեն նշվեց, ՀԸԳՀ-ն բավականին լայնածավալ փաստաթուղթ է և ընդգրկում է հասարակության հետաքրքրությունը ներկայացնող բազմաթիվ ոլորտներ: Ի թիվս ընդհանուր նպատակների ու դրույթների՝ համաձայնագիրը նախատեսում է նաև կողմերի պարտավորություններ (հանձնառություններ), որոնք Հայաստանի մասով նախատեսում են նաև մի շարք ոլորտների օրենսդրության մոտարկում ԵՄ համընդհանուր օրենսդրությանը:

Այսպես՝ համաձայնագրով նախատեսված է 158 հրահանգի (դիրեկտիվի), 95 կանոնակարգի, 7 որոշման մոտարկում և մեկ համաձայնագրի¹² ստորագրում: Ճանապարհային քարտեզը, որը ներկայացնում է համաձայնագրի կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումները, դրանց իրականացման ժամկետները, պատասխանատու կառույցները, 2019 թվականի համար նախատեսում է 9 միջոցառումների իրականացում: Եվս 39 միջոցառում նախատեսված է իրականացնել 2020 թվականին (տե՛ս Աղյուսակ 1): Սրանց մեջ չեն մտնում այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն երկու և ավելի տարիների ընթացքում:

¹¹ <https://www.e-gov.am/decrees/item/20361/>

¹² «Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիր:

Աղյուսակ 1. 2019 և 2020թթ. ընթացքում ՀՀԿ կիրարկման նպատակով նախատեսված միջոցառումները՝ ըստ ճանապարհային քարտեզի

ՀՀ	Կապը համաձայնագրի հետ	Նախատեսվող միջոցառումները՝ հղում անելով համապատասխան Հրահանգին	Կատարման ժամկետ	Համաձայնագրով նախատեսված ժամկետ	Համակարգող մարմին/պատասխանատու մարմիններ	ԵՄ աջակցության անհրաժեշտությունը և, անհրաժեշտության դեպքում՝ ձևաչափը	Ակնկալվող արդյունքը
116	Հոդված 48, կետ b (ii) Ջրի որակի և պաշարների կառավարում	ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում, վերջինիս ընդունումից հետո «Փոքր հիդրոէլեկտրակայաններ ի կառուցման և շահագործման համար արգելված գետերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: ՓՀԷԿ-րի կառուցման և շահագործման արդյունքում ջրային էկոհամակարգերի և ջրային ռեսուրսների վրա ազդեցության մեղմանն ուղղված իրավական ակտերի մշակում, դրանց կառուցման համար արգելված գետերի ցանկի սահմանում)	2018-2019 թ.-ի 1-ին եռամսյակ	2000/60/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում:	Բնապահպանության նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն Արտակարգ իրավիճակների նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2022 Twinning	Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման լիարժեք կայացում

4	ՀՈԴՎԱԾ 12 Կետ 1 և կետ 3 Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգում	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ սերտ համագործակցությամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի ընդունում	2019թ.-ի 4-րդ եռամսյակ	Առկա չէ	ՀՀ արդարադատության նախարարություն	Տարեկան գործողությունների ծրագիր 2018 ԵՄ-ն Հայաստանի քաղաքացիների համար. Ժողովրդավարության ամրապնդում Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված բյուջետային աջակցության ծրագիր	Մարդու իրավունքների պաշտպանության ուղղորտում պետական մարմինների գործողությունների համակարգում և արդյունավետության բարձրացում
5	ՀՈԴՎԱԾ 4 Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգում	Դատական և իրավական բարեփոխումների 2019- 2024թ. Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի ընդունում	2019թ.-ի 4-րդ եռամսյակ	Առկա չէ	ՀՀ արդարադատության նախարարություն	Տարեկան գործողությունների ծրագիր 2017. « Արդարադատության համակարգի կոնսոլիդացիա» Տարեկան գործողությունների ծրագիր 2020. Արդարադատության երկխոսություն Լավ կառավարման ուղղված համագործակցություն-2 (PGG2)	Ռազմավարական փաստաթղթի ընդունում, որը կնպաստի դատական իշխանության անկախության և արդյունավետության ամրապնդմանը, ինչպես նաև դրա նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը
6	Հոդված 12 կետ 2 Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգում Կետ 1 և կետ 3	Կոռուպցիայի դեմ պայքարի 2019-2022թթ. ազգային ռազմավարության ընդունում	2019թ.-ի 4-րդ եռամսյակ	Առկա չէ	ՀՀ արդարադատության նախարարություն	Տարեկան գործողությունների ծրագիր 2017.« Արդարադատության համակարգի կոնսոլիդացիա » TWINNING ծրագիր «Հանրային հատվածում բարեվարքության	Կոռուպցիայի դեմ պայքարի ուղղորտում պետական մարմինների գործողությունների համակարգում և արդյունավետության բարձրացում

	Հոդված 16 կետ 1 (g) Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարը					խթանում և կոռուպցիայի կանխարգելում» Արդարադատության երկխոսություն Լավ Կառավարման ուղղված երկխոսություն- 2 PGG2	
14	Հոդված 15 կետ (a) Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագրով ստանձնած պարտավորություններ ի լիարժեք կատարում	Ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկում, որը մեկ միասնական հարթակում կներառի ԵՄ անդամ պետությունների և ՀՀ պատկան մարմինների ներկայացուցիչներին	2019թ.	Համաձայնա- գրով ժամկետ նախատեսվ ած չէ	ՀՀ Տարածքային Կառավարման և Զարգացման Նախարարությանն միգրացիոն ծառայություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ՀՀ ոստիկանություն, ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն	ԵՄ աջակցության անհրաժեշտություն առկա չէ Համակարգի մշակումը իրականացվել է ՄԻԲՄԱ ծրագրի (ICMPD) շրջանակներում	Ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգը գործարկված է
16	Հոդված 26 և 27	Հոդված 26 և 27 ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի խեղաթյուրում և շահույթի տեղաշարժ (արտահանում)» ծրագրին (BEPS ծրա- գրին) անդամակցության ապահովում	2019	2019 Համաձայ- նագրով ժամկետ սահմանված չէ	2 Ֆինանսների նախարա- րություն Պետական եկամուտների կոմիտե	SIGMA AAP2020	Նորմատիվ իրավական ակտերի ընդունում, ինչպես նաև գործող ակտե- րում անհրաժեշտ փո- փոխությունների և լրացումների կատա- րում, ընդ որում նոր ընդունվելիք կամ փոփոխման ենթակա

		Հրահանգը բացակայում է					Նորմատիվ իրավական ակտերի անվանումները կարող են ներկայացվել միայն BEPS ծրագրին անդամակցելուց հետո:
45	Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2006թ. դեկտեմբերի 20-ի 2006/126/ԵՀ հրահանգ վարորդական վկայականների մասին	Կատարել փոփոխություններ և լրացումներ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում	2019 թվականի հունիս	Մինչև 2019 թվականի հունիսի 1-ը	ՀՀ ոստիկանություն	Անհրաժեշտությունը բացակայում է	Ճանապարհային երթևեկության անվտանգության չափանիշների բարելավում՝ ԵՄ լավագույն փորձին համապատասխան
46	Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2006թ. դեկտեմբերի 20-ի 2006/126/ԵՀ հրահանգ վարորդական վկայականների մասին	Կատարել փոփոխություններ վարորդական վկայականների տրամադրմանն առնչվող իրավական ակտերում:	2019 թվականի հունիս	Մինչև 2019 թվականի հունիսի 1-ը	ՀՀ ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն	Անհրաժեշտությունը բացակայում է	Վարորդական վկայականների տրամադրման ընթացակարգերի բարելավում
118	Հոդված 48 կետ b(ii)) Ջրի որակի և պաշարների կառավարում	«Բեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և կառավարություն ներկայացում	2019 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	2000/60/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում:	Բնապահպանության նախարարություն Արտակարգ իրավիճակների նախարարություն Առողջապահության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2022 Twinning	Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման լիարժեք կայացում
9	Հոդված 12 կետ 1 և կետ 3	ՀՀ նոր քրեական և քրեական	2020թ. 4-րդ եռամսյակ	Առկա չէ	ՀՀ արդարադատության նախարարություն	Տարեկան գործողությունների	Քաղաքացիների հիմնարար

	իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը	դատավարության օրենսգրքերի ընդունում				ծրագիր 2017.« Արդարադատության համակարգի կոնսոլիդացիա » Տարեկան գործողությունների ծրագիր 2020. Արդարադատության երկխոսություն Լավ կառավարմանն ուղղված համագործակցության ծրագիր-2 PGG2	իրավունքների ու ազատությունների պաշտպանության մեխանիզմների բարելավում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան
10	Հոդված 12 կետ 2 Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը Հոդված 16 կետ 1 (գ) Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարը	Անկախ հակակոռուպցիոն մարմնի ստեղծում՝ բարձր պատասխանատվությամբ	2020թ.-ի 4-րդ եռամսյակ	Առկա չէ	ՀՀ արդարադատության նախարարություն	Տարեկան գործողությունների ծրագիր 2017.« Արդարադատության համակարգի կոնսոլիդացիա » TWINNING ծրագիր «Հանրային հատվածում բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում» Արդարադատության երկխոսություն «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին. ծառայությունների մատուցման բարելավում՝ ավելի արդյունավետ և պատասխանատու հանրային	Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրում, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացում

						կառավարման միջոցով» ԵՄ բյուջետային աջակցության ծրագիր	
11	Հոդված 99 կետ 1 և կետ 2 Համագործակցություն տեսալսողական արդյունաբերության ուղղորտում և լրատվական դաշտում	Ձանգվածային լրատվության միջոցների ուղղորտ կարգավորող օրենքների փոփոխությունների փաթեթի մշակում և ընդունում	2020թ. 4-րդ եռամսյակ	Առկա չէ	ՀՀ արդարադատության նախարարություն	TAIEX ծրագիր ԵՄ-ն Հայաստանի քաղաքացիների համար. Ժողովրդավարության ամրապնդում	Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդնում, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության բարձրացում
12	Հոդված 12 կետ 1 և կետ 3 Իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը	Կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ ազգային ռազմավարության մշակում	2020	Առկա չէ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տեխնիկական և ֆինանսական աջակցություն	Կանանց և տղամարդկանց հավասարությունն ապահովող համապարփակ ազգային ռազմավարության մշակում
19	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1999 թվականի հունիսի 17- ի 1999/62/ԵՀ հրահանգ՝ որոշ ենթակառուցվածքներ ից օգտվելու համար բեռնատար փոխադրամիջոցների հարկման մասին	Որոշ ենթակառուցվածքներից օգտվելու համար բեռնատար փոխադրամիջոցների հարկման մասին գործող օրենսդրության մեջ փոփոխությունների և լրացումների իրականացում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն Ֆինանսների նախարարություն Պետական եկամուտների կոմիտե	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX2019	Ենթակառուցվածքներ ից օգտվելու համար բեռնատար փոխադրամիջոցների հարկման մեխանիզմների բարելավում
20	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29- ի 2004/52/ԵՀ	Ճանապարհային վճարի էլեկտրոնային փոխգործելիության ներդրում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX2019	Ճանապարհային վճարի էլեկտրոնային համակարգի փոխգործելիություն

	հրահանգ՝ Համայնքում ճանապարհային վճարի էլեկտրոնային համակարգերի փոխգործողության մասին			տարվա ընթացքում:	«Էլեկտրոնային կառավար ման ենթակառուցվածքնե րի ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն		
25	Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3821/85 կանոնակարգ (ԵՏՀ)՝ ավտոմոբիլային տրանսպորտում ձայնագրող սարքավորումների մասին՝ փոփոխություններով, որը կիրառվում է Նախքան Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2014 թվականի փետրվարի 4-ի թիվ 165/2014 կանոնակարգի (ԵՄ) 46-րդ հոդվածի կիրառելի դառնալը	Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման օրենսդրության փոփոխություններ, իրականացում, տեխնիկական հագեցվածություն	2020թ. 1-ին եռամսյակ	Համաձայնա գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Տրանսպորտային միջոցների անվտանգության բարձրացում
26	Խորհրդի թիվ 3821/85 (ԵՏՀ) և թիվ 2135/98 (ԵՀ) կանոնակարգերը փոփոխող և Խորհրդի թիվ 3820/85 կանոնակարգը (ԵՏՀ) ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006	Վարչական իրավախախտումների մասին օրենսդրության փոփոխությունների իրականացում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնա գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Վարորդի աշխատաժամանակի ստուգում, անվտանգության բարձրացում

	թվականի մարտի 15-ի թիվ 561/2006 կանոնակարգ (ԵՀ) ավտոմոբիլային տրանսպորտին վերաբերող որոշակի սոցիալական օրենսդրության ներդաշնակեցման մասին՝ փոփոխություններով						
27	Խորհրդի 88/599/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006/22/ԵՀ հրահանգ՝ ավտոմոբիլային տրանսպորտի գործունեությանն առնչվող սոցիալական օրենսդրությանը վերաբերող Խորհրդի թիվ 3820/85 (ԵՏՀ) և թիվ 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգերի կիրարկման համար նվազագույն պայմանների մասին	Օրենսդրական փոփոխության իրականացում	2020թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնա գրի ուժի մեջ մտնելու պահից 2 տարի ժամկետում	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX 2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Ավտոճանապարհային փոխադրումներին անվտանգության բարձրացում
28	Ավտոճանապարհային փոխադրումներ իրականացնող օպերատորի գործունեությամբ զբաղվելու համար նրա կողմից բավարարվելիք	Միջպետական փոխադրումների ոլորտը կանոնակարգող օրենսդրության փոփոխությունների իրականացում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնա գրի ուժի մեջ մտնելու պահից 8 տարի ժամկետում	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	Աջակցության անհրաժեշտություն չկա	Ավտոճանապարհային փոխադրումներ իրականացնող կազմակերպություննե րի գործունեության կանոնակարգում

	պայմաններին վերաբերող ընդհանուր կանոնները սահմանող և Խորհրդի 96/26/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 1071/2009 կանոնակարգ (ԵՀ)՝ փոփոխություններով						
29	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002 թվականի մարտի 11-ի 2002/15/ԵՀ հրահանգ՝ ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում շրջիկ բնույթի աշխատանքներ կատարող անձանց աշխատաժամանակը կազմակերպելու մասին	Օրենսդրական փոփոխության իրականացում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գրի ուժի մեջ մտնելու պահից 2 տարի ժամկետում	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX 2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Ավտոճանապարհային փոխադրումներին անվտանգության բարձրացում
30	Խորհրդի 3820/85 կանոնակարգը (ԵՀ) և Խորհրդի 91/439/ԵՀ հրահանգը փոփոխող և Խորհրդի 76/914/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝	Միջպետական փոխադրումների ոլորտը կանոնակարգող օրենսդրության փոփոխությունների իրականացում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն ազիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն Ոստիկանություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX 2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	ՀՀ օրենսդրության համապատասխանեցում միջազգային օրենսդրության պահանջներին

	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003 թվականի հուլիսի 15-ի 2003/59/ԵՀ հրահանգ՝ ապրանքներ և մարդկանց փոխադրող որոշ տրանսպորտային միջոցների վարորդների նախնական որակավորման և պարբերական վերապատրաստման մասին						
31	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/54/ԵՀ հրահանգ՝ Անդրեվրոպական ճանապարհային ցանցի թունելներին ներկայացվող նվազագույն անվտանգության պահանջների մասին	Կատարել փոփոխություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2010թ. դեկտեմբերի 7-ի N 710-Ն «ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհի վրա գտնվող առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների կատարման և ընդունման կարգը, ՀՀ ընդհ. Օգտ. ա/ճ-ի վրա գտնվող առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքների կատարման և	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն ազիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX 2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Ճանապարհային թունելներում երթևեկության անվտանգության բարելավում:

		ընդունման կարգը հաստատելու մասին» հրամանում					
32	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/96/ԵՀ հրահանգ՝ ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման մասին	Կատարել փոփոխություն ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 8 արձանագրության 35-րդ կետով հաստատված <<ճանապարհային ոստիկանության համակարգի բարեփոխումների հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցերին հավանություն տալու մասին>> որոշման մեջ:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն ազիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX 2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Ճանապարհային անվտանգության բարելավում՝ ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման, ճանապարհային անվտանգության աուդիտի և ճանապարհային ցանցի անվտանգության կառավարման միջոցով:
34	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 22-ի 913/2010 կանոնակարգ (ԵՄ)՝ մրցունակ բեռնափոխադրումներ ի համար եվրոպական երկաթուղային ցանցի վերաբերյալ՝ փոփոխություններով	Երկաթուղային բեռնափոխադրումների համար մրցունակ պայմանները և երկաթուղային ենթակառուցվածքի հասանելիությունը երաշխավորված են 28.11.2007թ. «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ միջազգային պայմանագրերով և համաձայնագրերով:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն ազիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում:	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX 2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Գործող օրենսդրության արդիականացում

		Գործող օրենսդրության ներդաշնակեցում ԵՄ օրենսդրության հետ					
38	Խորհրդի 1191/69 և 1107/70 կանոնակարգերը (ԵՏՀ) ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի 1370/2007 կանոնակարգ (ԵՀ)՝ երկաթգծով և ճանապարհով իրականացվող հանրային ուղևորատար փոխադրումների ծառայությունների մասին	Գործող օրենսդրության մոտարկում ԵՄ օրենսդրության հետ	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX 2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Մատուցվող ծառայությունների որակի մակարդակի բարձրացում
39	Խորհրդի 1191/69 և 1107/70 կանոնակարգերը (ԵՏՀ) ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի 1370/2007 կանոնակարգ (ԵՀ)՝ երկաթգծով և ճանապարհով	Մասնակիորեն կարգավորվում է 28.11.2007թ. «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով: Նոր նորմատիվ իրավական ակտի մշակումը:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX 2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Մատուցվող ծառայությունների որակի և երթևեկության անվտանգության մակարդակների բարձրացում

	իրականացվող հանրային ուղևորատար փոխադրումների ծառայությունների մասին						
40	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի 1371/2007 կանոնակարգ (ԵՀ)՝ երկաթուղային տրանսպորտից օգտվող ուղևորների իրավունքների և պարտավորությունների մասին	Մասնակիորեն կարգավորվում է՝ 03.02.1998թ. «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 14.10.2010թ թիվ 1346-Ն որոշումով, ՀՀ կառավարության 10.09.2015թ թիվ 1081-Ն որոշումով: Նոր նորմատիվ իրավական ակտի մշակում:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն ազիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԵՄ Բարձր դասի խորհրդատու TAIEX 2019 Պիլոտային ծրագրի նախաձեռնություն	Մատուցվող ծառայությունների որակի և երթևեկության անվտանգության մակարդակների բարձրացում
55	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1994 թվականի մայիսի 30-ի 94/22/ԵՀ հրահանգ՝ ածխաջրածինների հետախուզման, երկրաբանական որոնման և արտադրության համար թույլտվությունների տրամադրման և օգտագործման պայմանների մասին	Դիրեկտիվի մոտարկման արդյունքում «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի և օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակում	2020թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն ազիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 տարվա ընթացքում:	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«ԵՄ-ն էներգետիկայի համար» նախաձեռնություն Տարեկան գործողությունների ծրագիր 2019.Էներգետիկ արդյունավետություն և վերականգնվող էներգետիկա TAIEX 2019	«Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ կկարգավորվի նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման հետ կապված իրավահարաբերությունները

89.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	Մեծամասամբ համընկնում է ներկայիս Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի դրույթների հետ, ընդունված 2014թ:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնա գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն, Համակատարող՝ Առողջապահության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննության գործընթացի արդյունավետության բարձրացում:
89.2	Պահանջների սահմանում, ըստ որոնց սույն հրահանգի I հավելվածի ծրագրերը ենթակա կլինեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և ընթացակարգի սահմանում, որով կորոշվի, որ ծրագրերի համար կպահանջվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, 2011/92/ԵՄ հրահանգ, հոդված 4	Անհրաժեշտ է իրականացնել սույն հրահանգի հավելվածներ I, II և III-ում նշված գործողությունների հետ մամեմատական վերլուծություն և անհրաժեշտության դեպքում մոտարկում:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնա գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն, Համակատարող՝ Առողջապահության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննության գործընթացի արդյունավետության բարձրացում:
89.3	Կառուցապատողի կողմից տրամադրվելիք տեղեկատվության շրջանակի սահմանում (5-րդ հոդված)	ՇՄԱԳ ընդհանուր մեթոդաբանության մշակում, և մշակման կարգը սահմանող իրավական ակտի նախագծի մշակում: Հոդված 5-ում մեջքերված գործողությունների ցանկը սահմանված է Շրջակա միջավայրի	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնա գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննության գործընթացի արդյունավետության բարձրացում:

		վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքում					
89.4	Շրջակա միջավայրի հարցերով զբաղվող իշխանությունների հետ խորհրդակցության ընթացակարգի և հանրային խորհրդակցության ընթացակարգի սահմանում (6-րդ հոդված)	Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանված է ՀՀ Կառավարության 1325-Ն որոշմամբ: Առնչվող պետական մարմինների հետ խորհրդակցության ընթացակարգը սահմանված է ՇՄԱԳ փորձաքննության մասին օրենքով և Կառավարության 399-Ն որոշմամբ: Լրացուցիչ համեմատական վերլուծություն և հրահանգի պահանջների հետ մոտարկում:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննության գործընթացի արդյունավետության բարձրացում:
89.5	ԵՄ այն անդամ պետությունների հետ տեղեկատվության փոխանակման և խորհրդակցության վերաբերյալ միջոցառումների սահմանում, որոնց շրջակա միջավայրը հավանաբար զգալի ազդեցություն կկրի ծրագրից, 2011/92/ԵՄ հրահանգ, հոդված 7:	Ազդակիր երկրների միջև տեղեկատվության փոխանակման և խորհրդակցության ընթացակարգերը սահմանող իրավական ենթաօրենսդրական ակտի նախագծի մշակում և օրենքում լիազորող համապատասխան նորմերի սահմանում: ՇՄԱԳ փորձաքննության մասին օրենքով սահմանված են	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վրա անդրսահմանային ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության գործընթացի արդյունավետության բարձրացում, տեղեկատվության հասանելիության ապահովում երկրների միջև:

		անդրսահմանային ազդեցությունների դեպքում ընդհանուր կարգավորումները:					
89.6	Կառուցապատման թույլտվություն ստանալու համար դիմումների վերաբերյալ որոշումների ելքի մասին հանրությանը տեղեկացնելուն ուղղված միջոցառումների սահմանում 2011/92/ԵՄ հրահանգ, հոդված 9	Համապատասխան պահանջները սահմանված են ՇՄԱԳ փորձաքննության մասին օրենքով և Կառավարության 1329-Ն որոշմամբ: Մոտարկման անհրաժեշտություն չկա: Լրացուցիչ միջոցառում: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկվածության բարձրացում համապատասխան դասընթացների կազմակերպման միջոցով, և հանրության իրազեկվածության բարձրացում դասընթացների և իրազեկող միջոցառումների միջոցով՝ համակարգի արդյունավետ աշխատանքի ապահովման նպատակով:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության գործընթացում հանրային իրազեկվածության բարձրացում:
89.7	Վարչական և դատական	ՇՄԱԳ և փորձաքննական	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար	ՇՄԱԳ և փորձաքննական

	մակարդակներում արդյունավետ, չափազանց մեծ ծախսեր չընդգրկող և ժամանակին իրականացվող՝ հանրությանը և ոչ կառավարական կազմակերպություններին ներգրավող՝ վերանայման ընթացակարգերի սահմանում, 2011/92/ԵՄ հրահանգ, հոդված 11:	գործընթացներում պետական կառավարման մարմինների կողմից ընդունված վարչական և այլ ակտերի վերանայման նորմի ամրագրում համապատասխան իրավական ակտերում և անհրաժեշտության դեպքում համապատասխան ընթացակարգերի սահմանում, որոնք նաև կապահովեն հանրության և հասարակական կազմակերպությունների արդյունավետ ներգրավումը և մասնակցությունը գործընթացում:		մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում		ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	գործընթացներում պետական կառավարման մարմինների կողմից ընդունվող վարչական և այլ ակտերի վերանայման արդյունավետ գործընթաց, որին կապահովվի հանրության և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը:
91.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ մշակել՝ սահմանելով «Բնապահպանական տեղեկատվություն» հասկացությունն ու դրա հետ կապված այլ իրավակարգավորումներ նախատեսել:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության և մատչելիության ապահովում և տեղեկատվության տրամադրման հստակ ընթացակարգերի սահմանում:
91.2	Գործնական միջոցառումների սահմանում, որոնց	«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացումներ	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի մեջ	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար	Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության

	շրջանակում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի կլինի հանրության համար, և կիրառելի բացառությունների սահմանում, 2003/4/ԵՀ հասարակությանը բնապահպանական տեղեկատվության հասանելիության մասին հրահանգի 3-րդ և 4-րդ հոդվածներ:	կատարելու մասին օրենքի նախագիծ մշակել՝ սահմանելով «բնապահպանական տեղեկատվություն» հասկացությունն ու դրա հետ կապված այլ իրավակարգավորումներ նախատեսել:		մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում		ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	հանրային հասանելիության և մատչելիության ապահովում և տեղեկատվության տրամադրման հստակ ընթացակարգերի սահմանում:
91.3	Հանրության համար շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովում հանրային իշխանությունների կողմից, 2003/4/ԵՀ հրահանգի հոդված 3, կետ 1	Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասին օրենքի նախագծի և Տեղեկատվություն չտրամադրելու կամ մասնակի տրամադրելու ընթացակարգի սահմանման վերաբերյալ ենթաօրենսդրական ակտ(եր)ի մշակում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության և մատչելիության ապահովում և տեղեկատվության տրամադրման հստակ ընթացակարգերի սահմանում:
91.4	Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու կամ միայն մասնակի տեղեկատվություն տրամադրելու մասին որոշումների վերանայման	Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասին օրենքի նախագծով և նախագծից բխող ենթաօրենսդրական ակտ(եր)ով սահմանել տեղեկատվություն	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու կամ միայն մասնակի տեղեկատվություն տրամադրելու մասին որոշումների վերանայման

	ընթացակարգերի սահմանում, 2003/4/ԵՀ հրահանգի 6-րդ հոդված:	չտրամադրելու կամ միայն մասնակի տեղեկատվություն տրամադրելու մասին որոշումների վերանայման ընթացակարգերը:					ընթացակարգերի սահմանում և հստակեցում տեղեկատվության մատչելիությունը և հասանելիությունը ապահովելու նպատակով:
91.5	Հանրության շրջանակում շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տարածման համակարգի ստեղծում, 2003/4/ԵՀ հրահանգի 7-րդ հոդված:	Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասին օրենքի նախագծով և նախագծից բխող ենթաօրենսդրական ակտ(եր)ով սահմանել տեղեկատվության տարածման համակարգերի, մեխանիզմների, հասարակական կազմակերպությունների, ազդակիր համայնքներին և ՀԼՄ-երին տեղեկատվության տրամադրման և փոխանակման մեխանիզմների սահմանում:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը և հասանելիությունը ապահովող համակարգի և մեխանիզմների օրենսդրական կարգավորման ապահովում:
92.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) նշանակում	Շրջակա միջավայրի ոլորտային իրավական ակտերում հանրային մասնակցության, խորհրդակցության, ինչպես նաև հանրային առաջարկությունները և կարծիքները հաշվի առնելու պահանջների և	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության ապահովման և հանրային

		մեխանիզմների վերանայում և, անհրաժեշտության դեպքում, ամրագրում: Ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում վերոհիշյալ միջոցառման շրջանակներում:					մասնակցության դերի բարձրացում:
92.2	Հանրությանը տեղեկատվության տրամադրում նախատեսող մեխանիզմի սահմանում, 2003/35/ԵՀ հրահանգի 2(2)(a) և 2(2)(d) հոդվածներ:	Շրջակա միջավայրի ոլորտային իրավական ակտերում հանրային մասնակցության, խորհրդակցության, ինչպես նաև հանրային առաջարկությունները և կարծիքները հաշվի առնելու պահանջների և մեխանիզմների վերանայում և, անհրաժեշտության դեպքում, ամրագրում: Ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում վերոհիշյալ միջոցառման շրջանակներում:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության ապահովման և հանրային մասնակցության դերի բարձրացում:
92.3	Հանրային քննարկումների մեխանիզմի սահմանում, 2003/35/ԵՀ հրահանգի 2(2)(b) և 2(3) հոդված:	Շրջակա միջավայրի ոլորտային իրավական ակտերում հանրային մասնակցության, խորհրդակցության, ինչպես նաև հանրային առաջարկությունները և կարծիքները հաշվի առնելու պահանջների և մեխանիզմների վերանայում և,	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության ապահովման և հանրային մասնակցության դերի բարձրացում:

		անհրաժեշտության դեպքում, ամրագրում: Ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում վերոնշյալ միջոցառման շրջանակներում:					
92.4	Հանրային մեկնաբանությունները և կարծիքները որոշումների կայացման ընթացքում հաշվի առնելուն ուղղված մեխանիզմի սահմանում (2(2)(c) հոդված:	Շրջակա միջավայրի ոլորտային իրավական ակտերում հանրային մասնակցության, խորհրդակցության, ինչպես նաև հանրային առաջարկությունները և կարծիքները հաշվի առնելու պահանջների և մեխանիզմների վերանայում և, անհրաժեշտության դեպքում, ամրագրում: Ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում վերոնշյալ միջոցառման շրջանակներում:	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության ապահովման և հանրային մասնակցության դերի բարձրացում:
92.5	Վարչական և դատական մակարդակներում արդյունավետ, ժամանակին իրականացվող և չափազանց մեծ ծախսեր չընդգրկող արդարադատության մատչելիության երաշխավորում հանրության (ներառյալ ոչ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում և անհրաժեշտության դեպքում այլ իրավական ակտերի մշակում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայն գիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Հիմնական կատարող՝ Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում հանրության՝ ներառյալ հասարակական կազմակերպությունների համար արդարադատության մատչելիության լիարժեք ապահովում:

	կառավարական կազմակերպությունների համար (3(7) և 4(4) հոդվածներ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և աղտոտման համատեղ կանխարգելում և վերահսկում), 2003/35/ԵՄ հրահանգ						
97.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի	Ըստ անհրաժեշտության գործող օրենսդրության վերանայում, լիազոր մարմնի սահմանում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Հիմնական կատարող՝ Բնապահպանության նախարարություն, առաջարկում ենք քննարկել Տրանսպորտի և կապի նախարարության՝ որպես երկրորդական կատարող լինելու հարցը:	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Լիազոր մարմինը սահմանված է
97.2	Վառելիքի նմուշառման արդյունավետ համակարգի և ծծմբի պարունակության որոշմանն ուղղված վերլուծության համապատասխան անալիտիկ մեթոդների սահմանում (6-րդ հոդված)	Վառելիքի նմուշառման արդյունավետ համակարգի և ծծմբի պարունակության որոշմանն ուղղված վերլուծության համապատասխան անալիտիկ մեթոդները սահմանող իրավական ակտի նախագծի մշակում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 տարվա ընթացքում	Հիմնական կատարող՝ Բնապահպանության նախարարություն, առաջարկում ենք քննարկել Տրանսպորտի և կապի նախարարության՝ որպես երկրորդական կատարող լինելու հարցը:	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական գործունեության ազդեցության պատշաճ գնահատում, կանխարգելում և նվազեցում:
108.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	Ազգային օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխությունների կատարում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2019 Twinning	Կենսաբազմազանության պահպանության օրենսդրական դաշտի լիարժեքության ապահովում և արդյունավետության բարձրացում:

Ճանապարհային քարտեզով բավականին մեծ աշխատանք (44 միջոցառում) նախատեսված է ավարտել մինչև 2020 թվականի առաջին եռամսյակը: Ընդ որում, դրանց մեծ մասը պահանջում է ՀՀ օրենսդրության մոտարկում ԵՄ հրահանգներին ու կանոնակարգերին: Այսինքն՝ բավական լայնածավալ աշխատանք, որը պահանջում է եվրոպական փորձի և օրենսդրության խոր ուսումնասիրություն, դրա տեղայնացում և իրավական ակտերի նախապատրաստում: Այդ աշխատանքների համար ճանապարհային քարտեզով նախատեսված է մեծ ծավալով ԵՄ աջակցության, ինչպես օրինակ՝ ԵՄ բարձրաստիճան խորհրդատու, Թայեքսի, Թվինինգի օգտագործում: Հետագայում ավելի մանրամասն կանդիդատներ, թե ինչքանով է օգտագործվել այս աջակցությունը նախատեսված միջոցառումներ կատարելու համար: Բայց ԵՄ աջակցության մեխանիզմներին քիչ թե շատ ծանոթ անձը կհաստատի, որ օրինակ՝ **Թվինինգ գործիքը չի կարող կիրառվել միայն օրենսդրության մշակման համար՝ ոչ միայն ժամանակային, այլև բովանդակային առումով:** Թվինինգը ինստիտուցիոնալ բարեփոխումների և կարողությունների զարգացմանն ուղղված գործիք է, որը թեև պարունակում է օրենսդրության մոտարկման տարրեր, սակայն ուղղված է համապատասխան պետական մարմնի վարչական կարողությունների բարելավմանը (աշխատակիցների վերապատրաստման, կառուցվածքային փոփոխությունների միջոցով): Ժամանակային առումով, Թվինինգի ներքո մշակված ծրագիրը կարող է մեկնարկել լավագույն դեպքում¹³ գաղափարի մշակումից հետո մեկ տարի անց, իսկ պրակտիկայում դա տևում է ավելի երկար: **Այսպիսով ակնհայտ է, որ ճանապարհային քարտեզի մշակողները ծանոթ չեն ԵՄ աջակցության մեխանիզմներին կամ չեն տեղեկացրել շահառուներին դրանց մասին:**

Ճանապարհային քարտեզի ևս մեկ տարօրինակ առանձնահատկությունն այն է, որ միջոցառումների ցանկում ներկայացված են արդեն իսկ իրականացված միջոցառումներ: Օրինակ՝ ճանապարհային քարտեզի 43-րդ կետով, որպես **նախատեսվող միջոցառում**, նշված է «Մինչ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոյրու մասին» համաձայնագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության և ԵՄ անդամ պետությունների միջև երկկողմանի համաձայնագրերը ամբողջապես գործում են»: Այս միջոցառման համար որպես կատարման ժամկետ նշված է՝ «**Կատարված է**»: «Ճանապարհային քարտեզ» տերմինը իրենից ներկայացնում այն քայլերի հաջորդականությունը, որն անհրաժեշտ է տվյալ միջոցառման, այսինքն՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման համար: **Ուստի, որպես նախատեսվող քայլ ներկայացնել արդեն իսկ կատարված գործողությունը, առնվազն ոչ պրոֆեսիոնալ մոտեցում է:**

¹³ Այն դեպքում, երբ տվյալ ծրագրի մշակման համար չկա «ոչ աշխատանքային օր» հասկացություն, բոլորը լծված են այդ ծրագրի մշակմանը, և բոլորը պահպանում են դրա մշակման համար սահմանված ժամանակացույցը:

Համաձայնագրի և ճանապարհային քարտեզի մշտադիտարկում

Որպեսզի հասկանանք, թե ինչպես է իրականացվում համաձայնագրի կիրարկումը պրակտիկայում և համաձայնագրի կիրարկման մշտադիտարկումը, նախ ուսումնասիրենք համաձայնագրով նախատեսված կառույցների գործունեությունը:

Համաձայն ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ով սահմանված պարբերականության՝ համաձայնագրով նախատեսված կառույցները տարեկան առնվազն մեկ անգամ պետք է հանդիպեն՝ իրականացնելու համաձայնագրի կիրարկման առաջընթացի մոնիթորինգ, բացահայտելու բացերն ու տրամադրելու առաջարկություններ:

Այս համատեքստում կարող ենք արձանագրել հանդիպումների հետևյալ ժամանակացույցը.

Գործընկերության խորհուրդ

- Գործընկերության խորհրդի անդրանիկ նիստը կայացավ 2018թ. հունիսի 21-ին¹⁴: Նիստին շեշտադրվեց Հայաստանի կառավարության հստակ հանձնառությունը՝ պայքարել կոռուպցիայի դեմ, նշվեց, որ արդյունավետ և անկախ դատական համակարգը կարևոր է օրենքի գերակայության համար և արժեքավոր նախապայման՝ տնտեսական և սոցիալական զարգացման համար: Գործընկերության խորհուրդը վկայակոչեց, որ ավելի քան 160 մլն եվրո է հատկացվում 2017-2021 թվականների համար, որն առավելագույնս ուղղվելու է աջակցելու համաձայնագրի իրականացմանը և քաղաքացիների կենսապայմանների **տեսանելի և շոշափելի բարելավմանը**:
- Գործընկերության խորհրդի երկրորդ նիստը կայացավ 2019 հունիսի 13-ին¹⁵, որը շեշտադրեց 2019թ. հունիսի 1-ին Հայաստանի կողմից ընդունված ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային

¹⁴ https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/47036/%D5%A5%D5%BE%D6%80%D5%B8%D5%BA%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%87-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B4%D5%AB%D5%BB%D6%87-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%A4%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB%D5%AF-%D5%B6%D5%AB%D5%BD%D5%BF%D5%AB-%D5%A1%D6%80%D5%A4%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D5%BE_hy

¹⁵ https://eeas.europa.eu/delegations/armenia/64089/node/64089_hy

քարտեզի՝ որպես **երկրում առանցքային բարեփոխումների ամրապնդման կարևոր գործիքի դերը**: Միաժամանակ առանձնահատուկ ընդգծվեց Հայաստանում դատաիրավական ու արդարադատության ոլորտի բարեփոխումները, նշվեց անկախ, արդյունավետ և հաշվետու դատական համակարգի կարևորությունը, որը նպաստում է ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանությանը, այլև տնտեսական զարգացմանը և օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ բիզնես միջավայրին¹⁶:

Գործընկերության կոմիտե

- *Գործընկերության կոմիտեի* անդրանիկ նիստը կայացավ 2018թ. նոյեմբերի 27-ին¹⁷: Նիստին անդրադարձ կատարվեց համաձայնագրով ամրագրված ոլորտների բարեփոխումներին, հատուկ շեշտադրում արվեց ԵՄ ներդրումների ներգրավմանը, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ամրապնդմանը, տնտեսական զարգացմանը, մասնավոր հատվածի և ենթակառուցվածքային ներդրումների ֆինանսավորման հասանելիությանը, ինչպես նաև ՀԸԳՀ ճանապարհային քարտեզի նախագծին:
- *Գործընկերության կոմիտեի առևտրի հարցերով* առաջին նիստը կայացավ 2018թ. սեպտեմբերի 25-ին¹⁸, որի ընթացքում անդրադարձ կատարվեց համաձայնագրի առևտրին առնչվող հարցերին, մասնավորապես՝ ապրանքների և ծառայությունների առևտուր, մաքսային ոլորտ, սանիտարական և բուսասանիտարական

¹⁶ Տես՝ https://www.mfa.am/hy/press-releases/2019/06/13/fm_joint_statement/9642

¹⁷ Տես՝ <https://www.mfa.am/hy/press-releases/2018/11/27/armenia-eu/8778>

¹⁸ Տես՝

https://eeas.europa.eu/delegations/armenia/50999/%D5%A5%D5%BE%D6%80%D5%B8%D5%BA%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A5%D5%AB-%D5%A1%D5%BC%D6%87%D5%BF%D6%80%D5%AB-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A5%D6%80%D5%B8%D5%BE-%D5%A1%D5%B6%D5%A4%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB%D5%AF-%D5%B6%D5%AB%D5%BD%D5%BF%D5%A8%D5%9D-%D5%A5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4_hy

միջոցառումներ, մտավոր սեփականության իրավունքներ, մրցակցություն և պետական գնումներ: Քննարկվեցին նաև համաձայնագրի ճանապարհային քարտեզն ու ԱՀԿ և Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի դիտանցմանը վերաբերող հարցեր¹⁹:

- *Գործընկերության կոմիտեի առևտրի հարցերով երկրորդ նիստը* կայացավ 2019թ. հոկտեմբերի 17-ին: Ի թիվս համաձայնագրի՝ առևտրին առնչվող հարցերի փաթեթի, նիստին քննարկվեցին նաև համաձայնագրի 237-րդ հոդվածով ամրագրված՝ «շամպայն» և «կոնյակ» ապրանքային նշանների պաշտպանությանն առնչվող գործընթացները, համաձայնագրով սահմանված դրույթների իրականացման ընթացքը և այդ ուղղությամբ նախատեսվող հետագա աշխատանքները: Այս նիստի ավարտին ստորագրվեց ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի՝ Արբիտրների ցանկը հաստատելու մասին որոշումը՝ համաձայն ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ 339-րդ հոդվածի²⁰:

Տնտեսական համագործակցության և այլ հարակից ոլորտների ենթակոմիտե

2019թ. մարտի 12-ին Երևանում տեղի ունեցավ համաձայնագրի *տնտեսական համագործակցության և այլ հարակից ոլորտների ենթակոմիտեի* անդրանիկ նիստը²¹, որի նպատակն էր բարձրացնել կողմերի համատեղ ընկալումը մասնակիցների տնտեսության հիմունքների վերաբերյալ և այդ նպատակով

19

https://eeas.europa.eu/delegations/armenia/50999/%D5%A5%D5%BE%D6%80%D5%B8%D5%BA%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A5%D5%AB-%D5%A1%D5%BC%D6%87%D5%BF%D6%80%D5%AB-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A5%D6%80%D5%B8%D5%BE-%D5%A1%D5%B6%D5%A4%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB%D5%AF-%D5%B6%D5%AB%D5%BD%D5%BF%D5%A8%D5%9D-%D5%A5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4_hy

²⁰ <https://armenpress.am/arm/news/992076/>

²¹ https://eeas.europa.eu/delegations/armenia/59414/node/59414_hy

կողմերի միջև իրականացնել մակրոտնտեսական միտումների և կառուցվածքային բարեփոխումների, այդ թվում՝ տնտեսական զարգացման ռազմավարությունների շուրջ տեղեկատվության փոխանակում: Անդրադարձ կատարվեց նաև պետական ֆինանսների կառավարմանը և վիճակագրությանը, ինչպես նաև համաձայնագրի խարդախության դեմ պայքարի ու հսկողության վերաբերյալ դրույթների իրականացման շուրջ առկա առաջընթացին:

Ինչպես երևում է կայացած հանդիպումներից, ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ով սահմանված մարմինները ըստ իրենց ժամանակացույցի՝ կազմակերպում են տարեկան հանդիպումներն ու քննարկումները, և որպես քննարկումների հիմնական թեմաներ առանձնացվում են առավել կարևոր ու ընդհանուր խնդիրները: Հանդիպումների ընթացքում անդրադարձ է կատարվում նաև համաձայնագրի որոշ դրույթների իրականացմանը:

Այնուամենայնիվ, երկրի ներսում ՀԸԳՀ կիրարկման հիմնական մշտադիտարկումը, ինչպես սահմանված է ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 666-Լ որոշմամբ, իրականացնում է միջգերատեսչական հանձնաժողովը (որի կազմը չի թարմացվել ՀՀ կառավարության կառուցվածքային փոփոխություններից հետո): Հանձնաժողովն իր աշխատանքները մեկնարկել է 2018թ. օգոստոսի 30-ին: Մինչև 2019թ. հոկտեմբերի 21-ը կայացել է միջգերատեսչական հանձնաժողովի թվով 12 նիստ, որոնք ի թիվս այլ հարցերի՝ քննարկել են համաձայնագրի ճանապարհային քարտեզի մշակման, ԵՄ դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա դրա լրամշակման, փաստաթղթի իրականացման հետ կապված տարբեր հարցեր՝ ներառյալ ժամանակացույցն ու պատասխանատուներին:

Որպես համաձայնագրի ու ճանապարհային քարտեզի մշտադիտարկման մեխանիզմ՝ ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ սահմանվում է, որ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում ՀՀ համապատասխան գերատեսչությունները միջգերատեսչական հանձնաժողովին պետք է ներկայացնեն ամփոփ տեղեկատվություն՝ իրականացված և իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Հաշվետվությունների ներկայացումը գուցե և իրականացվում է, սակայն հաշվետվողականությունն ինքնանպատակ չէ: Այն հանդիսանում է մշտադիտարկման բաղկացուցիչ մասը, որի իրականացման համար համապատասխան գերատեսչությունը (մարմինը) պետք է ունենա հասանելի ռեսուրսներ և գործիքակազմ: Միաժամանակ, յուրաքանչյուր մոնիթորինգի փուլից հետո պետք է վեր հանվեն առկա բացերը,

խնդիրները, պլանավորված աշխատանքների իրականացման հնարավոր ռիսկերը, ինչպես նաև մշակվեն ու ներդրվեն ռիսկերի նվազեցման միջոցներ:

Առկա տեղեկատվությունը առնվազն լուրջ է այս աշխատանքների մասին, և չկա որևէ անդրադարձ, թե որ փուլում է համաձայնագրով սահմանված գործողությունների իրականացումը, արդյոք կա՞ համապատասխանություն սահմանված ժամանակացույցի հետ, ի՞նչ ընթացիկ խնդիրներ ու բարդություններ են նախանշվում այս հսկայածավալ աշխատանքի մեջ, որո՞նք են դրանց հաղթահարման ուղիները և այլն:

Հիշյալ խնդիրն ունի նաև երկրորդ կողմ, **այն է՝ հանրային իրազեկման ցածր մակարդակը:** Որպես վերջնարդյունք՝ Եվրոպական միությունը այս բոլոր գործընթացներն ու բարեփոխումները թիրախավորում է Հայաստանի քաղաքացիների ու հանրության բարօրությունը բարձրացնելու հեռահար նպատակով: Միաժամանակ, թե՛ բարեփոխումների ու համաձայնագրի գործողությունների, թե՛ հանրային իրավագիտակցության ու կրթության առումով առանցքային է, որ հանրությունը ժամանակին և թիրախավորված ձևով իրազեկված լինի իրականացվող քայլերի մասին, որոնք նաև ազդեցություն են ունենալու իրենց կյանքի որակի ու գործունեության վրա: Միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծման ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումը սակայն չի սահմանում հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմներ, ինչը **հակասում է ՀՀ կառավարության և իշխող քաղաքական ուժի ծրագրային մոտեցումներին:**

ՀԸԳՀ-ի տեքստից ակնհայտ է, որ ինչպես և Ասոցացման օրակարգ ունեցող երկրներում (օրինակ՝ Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա), Հայաստանը ևս գրեթե նույն մասշտաբով և սեղմ ժամկետներում իրավական ու օրենսդրական մոտարկման հանձնառություններ ունի, ինչը ենթադրում է հսկայածավալ աշխատանք և պահանջում է կարողունակ մարդկային ռեսուրսներ, համապատասխան ուղեցույցների ու մեթոդաբանության առկայություն, ինստիտուցիոնալ հստակ շրջանակ՝ ներառելով և՛ գործադիր, և՛ օրենսդիր մարմիններին, արդիական էլեկտրոնային պլատֆորմներ ու գործիքներ, հստակ պլանավորում, աշխատանքների համակարգման ու մոնիթորինգի մեխանիզմներ:

Այդուհանդերձ, ուսումնասիրելով միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի մասին հանրությանը հասանելի տեղեկատվությունը, պարզ է դառնում, որ **համաձայնագրով նախատեսված գործողությունների իրականացումը չի ենթարկվում պարզաձև վերահսկողության և մոնիթորինգի, ինչի մասին վկայում են նաև ժամանակացույցի ու ժամկետների խախտումները:** Այսպես, օրինակ՝ 2018թ. օգոստոսի 30-ին կայացած միջգերատեսչական հանձնաժողովի առաջին նիստում հանձնաժողովի անդամները քննարկել ու հաստատել էին ճանապարհային քարտեզի իրականացման ու հետագա քայլերի ժամանակացույցը, համաձայն որի՝ մինչև տարեվերջ իրավական ակտի տեսքով

պետք է հաստատվեր ԵՄ կողմի հետ համաձայնեցված համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների ճանապարհային քարտեզի տարբերակը: Այդուհանդերձ, ինչպես երևում է պաշտոնական տվյալների ժամանակացույցով, 2018թ. դեկտեմբերի փոխարեն ճանապարհային քարտեզը հաստատվեց միայն 2019թ. հունիսին, ինչի արդյունքում մոտ կես տարվա կտրվածքով գործընթացը խախտվեց իր նախնական պլանավորումից:

Ճանապարհային քարտեզի իրականացում

ՀԸԳՀ Գործընկերության խորհրդի երկրորդ նիստին մասնակիցները շեշտել էին ճանապարհային քարտեզի՝ որպես **«երկրում առանցքային բարեփոխումների ամրապնդման կարևոր գործիք»** դերը: Այս արտահայտությունը ենթադրում է, որ ՀԸԳՀ դրույթները առնվազն պետք է հանդիսանան ոլորտային ռազմավարությունների ու քաղաքականության հիմնասյուններից մեկը: Ավելին, քանի որ համաձայնագիրը *«բարեփոխումների յուրօրինակ գործիք է, որի արդյունավետ կիրառումը շոշափելի արդյունքներ կբերի հասարակությանը և քաղաքացիների համար»*²², դա պետք է հանդիսանա նոր ոլորտային ռազմավարությունների, հայեցակարգերի կամ ծրագրերի աղբյուր: Եվ այսպես, 2019 թվականին www.e-draft.am կայքի միջոցով քննարկման ներկայացված 20 ռազմավարություններից ու հայեցակարգերից միայն երեքի դեպքում էր շեշտադրում կատարվում ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին՝ այն ներառելով փաստաթղթի հիմքերի ցանկում: Եվս մեկի դեպքում²³ ՀԸԳՀ-ն հիշատակվում է որպես ֆինանսավորման աղբյուր՝ ակնկալելով մոտ 4 մլն դոլարի ներդրում լաբորատորիաների ստեղծման նպատակով:

Այսպիսով, թեև հայտարարվում է, որ ՀԸԳՀ-ն հանդիսանում է առանցքային բարեփոխումների յուրահատուկ գործիք, **վերջինս չի դիտարկվում որպես ոլորտային բարեփոխումներին ուղղված ռազմավարական ծրագրերի մշակման հիմքերից մեկը:**

Հետազոտության ընթացքում ուսումնասիրեցինք նաև, թե ինչպես են իրականացվում 2019 թվականին նախատեսված միջոցառումները: Ինչպես արդեն նշվել էր, 2019 թվականին իրականացման ենթակա էր 9 միջոցառում: Աղյուսակ 2-ում ներկայացվում է իրականացման ենթակա միջոցառումները, ճանապարհային քարտեզով դրանց համար սահմանված ժամկետները և ներկա վիճակը:

²² ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի 26.11.2019թ. մամուլի ասուլիսը (<https://news.am/arm/news/546552.html>):

²³ «2019-2025 թվականների Հայաստանի Հանրապետության չափագիտության ազգային ենթակառուցվածքի արդիականացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Աղյուսակ 2. ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզով 2019թ. նախատեսված միջոցառումները և դրանց իրականացման ընթացքը

ՀՀ	Միջոցառման անվանումը	Իրականացման ժամկետը	Ներկա վիճակը
1.	ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում, «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գետերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ	2018-2019 թ.-ի 1-ին եռամսյակ	Կատարվել է. ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխությունը կատարվել է 2019թ. հունիսի 28-ին: Չի կատարվել. 2019թ. օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 4-ը www.e-draft.am կայքում հանրային քննարկման էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը, որով նախատեսվում է ՀՀ ջրային օրենսգրքի 30.1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված գետերի ցանկը հաստատելու մասին կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել 2020թ. հունիսին: Իսկ քանի որ որոշման նախագծի ներկայացնելը ոչ մի ազդեցություն չունի հասարակության կյանքի կամ ոլորտի բարեփոխումների վրա, ուստի ՀԸԳՀ պահանջը կարելի է համարել չկատարված:
2.	Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի ընդունում	2019թ.-ի 4-րդ եռամսյակ	Չի կատարվել. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման

			նախագիծը www.e-draft.am կայքում հանրային քննարկման է ներկայացվել ²⁴ 2019թ. հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում: Որոշման նախագիծը դեռ չի ընդունվել:
3.	Դատական և իրավական բարեփոխումների 2019-2024թ. Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի ընդունում	2019թ.-ի 4-րդ եռամսյակ	Կատարվել է. «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը» հաստատվել են ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1441-L որոշմամբ ²⁵ :
4.	Կոռուպցիայի դեմ պայքարի 2019-2022թթ. ազգային ռազմավարության ընդունում	2019թ.-ի 4-րդ եռամսյակ	Կատարվել է. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2019թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1332-Ն որոշմամբ ²⁶ :
5.	Ռեադմիսիոն հայցերի էլեկտրոնային կառավարման համակարգի գործարկում, որը մեկ միասնական հարթակում կներառի ԵՄ անդամ պետությունների և ՀՀ պատկան մարմինների ներկայացուցիչներին	2019թ.	Չի կատարվել. Համակարգը դեռևս չի գործարկվել:
6.	ՏՀԶԿ-ի «Հարկվող բազայի խեղաթյուրում և շահույթի տեղաշարժ (արտահանում)» ծրագրին (BEPS ծրագրին) անդամակցության ապահովում	2019	Կատարվել է. Հայաստանը 2019թ. անդամակցել է BEPS ծրագրին:

²⁴ <https://www.e-draft.am/projects/2017>

²⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

²⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

7	Կատարել փոփոխություններ և լրացումներ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում	2019 թվականի հունիս	Չի կատարվել. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը թեև 2019թ. հունիս-հուլիս ամիսներին ներկայացվել են հանրային քննարկման www.e-draft.am կայքում ²⁷ , սակայն դեռ չեն ընդունվել:
8	Կատարել փոփոխություններ վարորդական վկայականների տրամադրմանն առնչվող իրավական ակտերում	2019 թվականի հունիս	2019 թվականի հուլիսին հանրային քննարկման էր ներկայացվել «Վարորդական վկայական ստանալու համար քննություններ ընդունելու և վարորդական վկայական տալու կարգը, վարորդական վկայական ստանալու համար պարտադիր ներկայացնելու ենթակա փաստաթղթերի ցանկը, ազգային վարորդական վկայականների ձևերն ու նկարագրերը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը²⁸, որը սակայն դեռ չի ընդունվել: 2019 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին հանրային քննարկման էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 1327-Ն որոշման մեջ փոփոխություններ

²⁷ <https://www.e-draft.am/projects/1757>

²⁸ <https://www.e-draft.am/projects/1783>

			կատարելու մասին» ²⁹ ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը, սակայն, դեռ չի ընդունվել:
9	«Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և կառավարություն ներկայացում	2019 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Չի կատարվել. Տեսականորեն հնարավոր է, որ մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել որոշման նախագիծը, սակայն, նախ՝ դա կատարվել է նախագիծը առանց հանրային քննարկման ներկայացնելու, և երկրորդ՝ միայն նախագծի մշակումը դեռ չի կարելի համարել ՀԸԳՀ պահանջների կատարում և ոլորտային բարեփոխում: Հետևաբար, այս միջոցառումը չի կատարվել:

Այսպիսով, 2019 թվականի համար նախատեսված 9 միջոցառումներից, նոյեմբերի 30-ի դրությամբ, իրականացվել է միայն երեքը: Եվս մեկ միջոցառում իրականացվել է մասամբ, քանի որ կատարվել է այդ միջոցառման միայն մի մասը, այն էլ՝ նախատեսված ժամկետից երեք ամիս անց: Մյուս հինգ միջոցառումները դեռևս չեն իրականացվել:

Դատելով իրականացված աշխատանքներից՝ **ՀՀ պետական մարմինները դեռ շատ հեռու են իրական մոտարկման գործընթացներից:** Իսկ պետական մակարդակում չկա միասնական դիրքորոշում ու քաղաքականություն՝ մոտարկման գործընթացը հնարավորինս քիչ ցավոտ ու սահուն կազմակերպելու համար:

Ավելին՝ թեև միջգերատեսչական հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր եռամսյակ հավաքագրվում է ճանապարհային քարտեզի իրականացման մասին հաշվետվություն, դրանք, փաստորեն, կրում են զուտ տեխնիկական բնույթ, քանի որ չեն ձեռնարկվում տեսանելի քայլեր՝ նախատեսված միջոցառումների իրականացումն ապահովելու, ժամանակացույցը պահպանելու և ծագած խնդիրներին լուծումներ տրամադրելու նպատակով:

Ամփոփում

- Թեև մշակվել է ՀԸԳՀ իրականացման ճանապարհային քարտեզը և ստեղծվել է դրա իրականացումը համակարգող միջգերատեսչական հանձնաժողով, այսօր բացակայում է համապատասխան հանրային տեղեկատվությունը՝ միջոցառումների իրականացման համար պատասխանատու պետական կառավարման մարմինները հասարակությանը չեն ներկայացնում իրենց իսկ

²⁹ <https://www.e-draft.am/projects/1824>

ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի մասին, իսկ միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքները թափանցիկ չեն: Ավելին, դեռևս աղոտ է հասարակական կազմակերպությունների և բիզնեսի մասնակցությունը համաձայնագրի կիրարկման աշխատանքներին, քանի որ դեռևս ձևավորված չէ Քաղաքացիական հասարակության հարթակը, իսկ ճանապարհային քարտեզի կիրարկման միջոցառումների հանրային քննարկումներն իրականացվում են միայն www.e-draft.am կայքի միջոցով, ինչը բավարար չէ հանրային կարծիքի և գործարար համայնքի դիրքորոշումն ամբողջությամբ ստանալու համար: **Այս ամենը հնարավորություն չի տալիս ապահովելու անհրաժեշտ հանրային վերահսկողություն, իսկ կառավարության գործունեությունը շեղում է թափանցիկության ուղեծրից:**

- Ճանապարհային քարտեզով 2019 թվականի համար նախատեսված միջոցառումների մեծամասնությունը առայժմ չի կատարվել: Այսինքն՝ «Իմ քայլը» դաշինքի **«քայլեր ենք ձեռնարկելու Եվրամիության հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի լավագույնս կիրարկման ուղղությամբ...»** խոստումը դեռևս իրականություն չէ:
- 2019 թվականին հանրային քննարկման ներկայացված ոլորտային ռազմավարությունների և բարեփոխումների գերակշիռ մասը չի մշակվել ՀԸԳՀ-ի շրջանակներում սահմանված հանձնառությունների կամ ԵՄ լավագույն փորձի հիման վրա: Հետևաբար, ՀՀ կառավարության տեսակետը, ըստ որի՝ **«համաձայնագրի (ՀԸԳՀ) կիրարկումը դիտվում է որպես Հայաստանի զարգացմանն ուղղված կառավարության բարեփոխումների օրակարգին նպաստող նշանակալից գործոն»**, չի համապատասխանում իրականությանը:
- Ուսումնասիրելով ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ և «ՀՀ-ԵՄ Գործընկերության առաջնայնություններ» փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի մասին հանրությանը հասանելի տեղեկատվությունը՝ ակնհայտ է, որ **համաձայնագրով նախատեսված գործողությունների իրականացումը չի ենթարկվում բավարար վերահսկողության, չեն մշակվում ծագած խնդիրները հաղթահարելու քայլեր կամ կանխարգելիչ միջոցներ**, ինչի մասին վկայում են նաև ժամանակացույցի ու ժամկետների խախտումները:

ՄԱՍ 2. ԵՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Եվրամիության հետ տնտեսական համագործակցության վարչության կանոնադրության³⁰՝ վարչությունն իրականացնում է ԵՄ հետ համագործակցության ընդհանուր համակարգումը, ՀՀ-ին տրամադրվող ԵՄ աջակցության համակարգումը, ֆինանսավորման համաձայնագրերի շուրջ բանակցությունների իրականացումն ու համակարգումը, ԵՄ կողմից ՀՀ-ին տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» արտոնյալ առևտրային ռեժիմի իրականացումն ու դիտանցումը, ինչպես նաև Եվրոպական հարևանության գործիքների ներքո իրականացվող ծրագրերի, ներառյալ՝ Թվինինգը, Թայքսը, Սիգման, Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի իրականացման համակարգումն ու դիտանցումը:

Սակայն, համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալի 18.11.2019թ. թիվ 09.13.5/11590-2019 գրության (տե՛ս Հավելված 3), «2019 թվականից Եվրամիության աջակցության գործիքների շրջանակներում ծրագրերի ընդհանուր համակարգումն իրականացվում է ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի կողմից»: Այս աշխատանքները ներառում են նաև ԵՄ բյուջետային աջակցության համակարգումը, որը, որպես ոլորտային բարեփոխումներին տրամադրվող մեծ աջակցություն, պահանջում է մոնիթորինգի ու համակարգման լուրջ աշխատանք: Այսպիսով, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, չնայած իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներին, չի իրականացնում ԵՄ ընդհանուր աջակցության համակարգումն ու դիտանցումը, իսկ այդ գործառույթները, առանց որևէ իրավական հիմքի, իրականացվում են փոխվարչապետի գրասենյակի կողմից:

Համաձայն ՀՀ վարչապետի 2018թ. մայիսի 25-ի N 568-Լ որոշման՝ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի գործառույթներից է միջազգային տնտեսական ինտեգրման և արտաքին տնտեսական կապերի վերաբերյալ վերլուծությունների իրականացումը (կանոնադրության 7 (4) կետ)³¹: Միաժամանակ, ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակում գործող միջազգային տնտեսական ինտեգրման վարչությունն ու վարկային և դրամաշնորհային ծրագրերի համակարգման վարչությունը որոշակի համակարգման աշխատանքներ են իրականացնում ԵՄ հետ աջակցության պլանավորման, բանակցությունների ու համակարգման տեսանկյունից: Մասնավորապես, միջազգային տնտեսական ինտեգրման վարչության գործառույթներից են.

³⁰ https://mineconomy.am/media/7989/10.EU_Kanonadrutyun.pdf

³¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131216>

«ե. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև տնտեսական համագործակցության՝ ներառյալ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների համագործակցության աշխատանքների համակարգման իրականացման ապահովումը,

զ. Եվրասիական տնտեսական միության և Եվրոպական միության հետ տնտեսական քաղաքականության ներդաշնակեցմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների աշխատանքների համակարգման իրականացման ապահովումը»:

Իսկ վարկային և դրամաշնորհային ծրագրերի համակարգման վարչության գործառույթներից են.

«բ. միջազգային (տարածաշրջանային) ֆինանսական կազմակերպությունների³² Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության և գործընկերության ծրագրային (ռազմավարական) փաստաթղթերի նախապատրաստման և մշակման աշխատանքների ապահովումը,

գ. միջազգային (տարածաշրջանային) ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսավորման շրջանակներում վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրավասու մարմինների աշխատանքների համակարգման իրականացման ապահովումը,

դ. միջազգային ֆինանսական կառույցների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների ոլորտային ուղղությունների վերլուծությունը և համադրումը, ըստ անհրաժեշտության առաջարկություններ ներկայացնելը դրանց վերաբերյալ,

ե. գրասենյակ ներկայացված օտարերկրյա պետություններից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկերի և դրամաշնորհների ստացման համար նախաձեռնողական աշխատանքների վերլուծությունը, այդ թվում՝ այլ պետական մարմինների ծրագրային առաջարկների ուսումնասիրությունը և կարծիքի ներկայացումը,

զ. օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների հաշվետվությունների (կատարողական) ուսումնասիրությունը և ամփոփումը,


ը. միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող բյուջետային աջակցության ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության իրավասու

³² Այդ թվում՝ նաև Եվրոպական միություն

մարմինների կողմից համապատասխան նախապայմանների կատարման ընթացքի ուսումնասիրությունը»:

Այս գործառույթները չեն ներառում ԵՄ աջակցության համակարգումը: Փորձեցինք ՀՀ կառավարության կայքից հասկանալ, թե որ կառույցն է իրականացնում ԵՄ աջակցության համակարգումը: ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի ո՛չ միջազգային տնտեսական ինտեգրման վարչության, ո՛չ էլ վարկային և դրամաշնորհային ծրագրերի համակարգման վարչության էջերից **չգտանք որևէ տեղեկատվություն նրանց աշխատանքների վերաբերյալ**: Ավելին, **բացակայում էին նաև հասարակ հաղորդակցության համար անհրաժեշտ կոնտակտային տվյալները**:

Նկար 1. ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի վարկային և դրամաշնորհային ծրագրերի համակարգման և միջազգային տնտեսական ինտեգրման վարչությունների վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ կառավարության կայքից, նոյեմբեր 2019թ.



Եթե նույնիսկ համարենք, որ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակի կողմից է իրականացվում ԵՄ աջակցության համակարգումը, ակնհայտ է, որ **բացակայում է ԵՄ հետ աշխատանքի թափանցիկությունը և հասարակությանն անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը**: Եթե Էկոնոմիկայի նախարարությունը որոշ չափով տրամադրում էր տեղեկատվություն իր կողմից իրականացված աջակցության համակարգման մասին³³, ապա այսօր ընդհանրապես չկա հրապարակային տեղեկություն իրականացվող աշխատանքների ու քայլերի մասին, ԵՄ աջակցությամբ

³³ <https://mineconomy.am/page/92>

պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և դրանց ընթացքի մասին, չկա նույնիսկ տեղեկատվություն այդ գործառույթն իրականացնող մարմնի մասին:

ԵՄ աջակցության լայնորեն կիրառումը նախատեսված է ՀԸԳՀ ճանապարհային քարտեզում, ինչը ենթադրում է, որ համապատասխան մարմինները պետք է ունենան անհրաժեշտ տեղեկատվություն, կարողություններ և գիտելիքներ ԵՄ աջակցության ծրագրերի արդյունավետ և նպատակային կազմակերպման ու իրականացման համար: ԵՄ աջակցության ծրագրերի, իրականացվող աշխատանքների և հնարավոր համագործակցության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը չի նպաստում հմտությունների և կարողությունների զարգացմանը: Դրանց համար անչափ կարևոր է նաև ԵՄ աջակցության ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ **դասընթացների և վերապատրաստումների անցկացումը, ինչը կարծես բացակայել է ամբողջ 2019 թվականի ընթացքում:** Եթե նույնիսկ այդպիսի միջոցառումներ անցկացվել են, կարծում ենք՝ կարևոր է դրա մասին տեղյակ պահել հասարակությանը, քանի որ այն բարձրացնում է և՛ թափանցիկությունը, և՛ հասարակական վստահությունը:

Պետական կառավարման մարմիններում ԵՄ աջակցության ծրագրերի մասին իմացության ցածր մակարդակի մասին է վկայում դրանց թվարկումը ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի տարբեր միջոցառումներում: Օրինակ, Թվինինգ գործիքը նախատեսվում է կիրառել այնպիսի միջոցառման համար, որը պետք է իրականացվի 2019-2020 թվականներին: Իսկ այդ գործիքի մասին գիտելիք ունեցող անձը պարտավոր է իմանալ, որ մեկ տարվա ընթացքում հնարավոր չէ ապահովել նախատեսված միջոցառման իրականացումը Թվինինգի միջոցով, քանի որ դրա ներքո ցանկացած ծրագրի մեկնարկի համար անհրաժեշտ է առնվազն մեկ տարի նախապատրաստական աշխատանք:

Ավելին, միայն գործիքների մասին մի փոքր իմացությունը բավարար չէ ճիշտ ծրագրային փաստաթղթեր պատրաստելու և ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Յուրաքանչյուր գործիքի ներքո ծրագրային առաջարկների մշակումը, ներկայացումը և հետագայում նաև իրականացումը պահանջում է ԵՄ փաստաթղթերի հետ աշխատելու գիտելիքներ, որոնք կարելի է ձեռք բերել միայն անհրաժեշտ վերապատրաստումների և աշխատանքի միջոցով: Ծրագրերի իրականացման փուլում պետական մարմինների աշխատակիցներից պահանջվում է անմիջական մասնակցություն դրանց իրականացմանը՝ համապատասխան փաստաթղթեր և հաշվետվություններ պատրաստելու, ներկայացնելու կամ գնահատելու միջոցով: Այդ է պատճառը, որ դեռևս **2008 թվականից, ԵՄ աջակցության ծրագրերի համակարգող մարմինները մշտապես անցկացրել են շահառու մարմինների վերապատրաստման դասընթացներ, քննարկումներ մասնագետների հետ, իրազեկման և կարողությունների հզորացման միջոցառումներ:**

Այսպիսով, համատարած «օպտիմալացման» և պետական համակարգը նոր կադրերով համալրելու մոտեցման, երկու տարբեր մարմիններում կրկնվող գործառույթների շնորհիվ, անհրաժեշտ կրթական և կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների բացակայության պատճառով, շահառու մարմիններում ԵՄ աջակցության ծրագրերի վերաբերյալ գիտելիքները գտնվում են ցածր մակարդակում: Իսկ այս ամենը վկայում է **ԵՄ աջակցության համակարգման փորձի ու գիտելիքի պակասի, ինչպես նաև ոչ պատշաճ մակարդակով իրականացման մասին:**

ԵՄ կողմից Հայաստանին տրամադրված աջակցություն

Եվրոպական միությունը ՀՀ-ին աջակցությունը հիմնականում տրամադրում է Եվրոպական հարևանության գործիքի ներքո՝ յուրաքանչյուր տարի երկրի հետ կնքված տարեկան գործողությունների ծրագրին համապատասխան: Այդ գործողությունների ծրագրերով սահմանվում են ԵՄ կողմից աջակցության ոլորտները և աջակցության տրամադրման ձևաչափերն ու մեխանիզմները, որոնք ներառում են նաև այնպիսի գործիքներ (ծրագրեր), ինչպիսիք են, օրինակ՝ Թվինինգը, Թայեքսը, Սոսյուն, Սիգման, և Բյուջետային աջակցությունը: Այս գործիքներից առաջին երեքը մշտապես հասանելի ծրագրեր են, որոնց միջոցով աջակցություն ստանալու համար անհրաժեշտ է համապատասխան պետական մարմինների նախաձեռնությունը:

Մյուս երկու ծրագրերի համար ԵՄ կողմից հատկացվող գումարները և նախատեսվող ոլորտները սահմանվում են ԵՄ-Հայաստան տարեկան գործողությունների ծրագրերով:

Թվինինգ, Թայեքս և Սիգմա աջակցության ծրագրերից Հայաստանը սկսել է օգտվել դեռևս 2008 թվականից՝ իրականացնելով ակտիվ հանրային իրազեկման և կարողությունների զարգացման միջոցառումներ: Քանի որ այսօր բացակայում է առցանց և հրապարակային տեղեկատվությունը ԵՄ աջակցության ծրագրերի վերաբերյալ, փորձեցինք տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ ԵՄ կայքից, գտնել տեղեկատվություն, թե ինչպես է Հայաստանն օգտվում այդ ծրագրերից, և ինչ միջոցառումներ կամ ծրագրեր են իրականացվել ու իրականացվում Հայաստանի կողմից: Արդյունքում.

- Մինչ օրս Հայաստանում իրականացվել է 16 Թվինինգ ծրագիր, որոնցից վերջին ծրագրերը՝ ներդրումների ու վիճակագրության ոլորտներում, ամփոփվել են դեռևս 2017թ.-ին³⁴: Թեև ԵՄ-Հայաստան տարեկան գործողությունների վերջին տարիների ծրագրերով նախատեսված են Թվինինգ ծրագրերի մեկնարկ և իրականացում, 2018-2019 թվականներին նոր զարգացումներ դեռևս չկան: ԵՄ աղբյուրներից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2017-2018 թվականներին

³⁴ <https://mineconomy.am/page/776>

https://eeas.europa.eu/sites/eeas/files/factsheet_on_eu_assistance_in_armenia_0.pdf

պետք է նախաձեռնվեր երեք³⁵, 2018-2019 թվականներին՝ ևս առնվազն 5 ԹՎինինգ ծրագրեր, սակայն մինչ օրս չկա հստակ տեղեկատվություն դրանց վերաբերյալ: ԵՄ կողմից հրապարակված ԹՎինինգի և Թայեքսի 2018 թվականի հաշվետվությունից պարզվում է, որ 2018 թվականին Հայաստանում չի իրականացվել ոչ մի ԹՎինինգ ծրագիր³⁶: Իսկ 2019 թվականին, ըստ ԵՄ կանխատեսումների ցանկի, նախատեսվում է ԵՄ անդամ երկրներին ներկայացնել չորս ԹՎինինգ ծրագրի առաջարկ³⁷, որոնք, լավագույն դեպքում, կարող են սկսվել 2020 թվականի կեսերին:

- Թայեքսի շրջանակներում 2012-2019 թվականների ընթացքում իրականացված միջոցառումները ներկայացված են ստորև.

Տարեթիվ	2012	2013	2014	2015	2016	2017	2018 ³⁸	2019 ³⁹
Քանակ	25	20	6	6	13	12	6	6

2014-2015 թվականների ընթացքում միջոցառումների քանակի անկումը պայմանավորված էր Հայաստանի ԵԱՏՄ-ին անդամակցությամբ: Եվ չնայած ԵՏՄ-ին անդամակցելու և ԵՄ հետ Ասոցացման համաձայնագիրը չստորագրելու հանգամանքին՝ այդ տարիներին հնարավոր եղավ Հայաստանում պահել և շարունակել ԵՄ աջակցության բոլոր գործիքները, ինչը ԵՄ հետ ինտենսիվ և արդյունավետ աշխատանքի արդյունք էր:

Թայեքսի շրջանակներում տրամադրված աջակցության վերաբերյալ տեղեկատվությունից նկատվում է իրականացված միջոցառումների կրկնակի անկում 2018-2019 թվականներին, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես «օպտիմալացմամբ», այնպես էլ միջոցառումների նախաձեռնման համար պատասխանատու մարմինների ոչ արդյունավետ աշխատանքով կամ ոչ բավարար իմացությամբ: Ի դեպ, ՀԸԳՀ ճանապարհային քարտեզով տարբեր միջոցառումների իրականացման համար 2019 թվականին նախատեսված էր 38 Թայեքս միջոցառում: 2019 թվականին, ըստ ԵՄ Թայեքս տվյալների բազայի, սպասվում է ևս երկու միջոցառման իրականացում Հայաստանում (տե՛ս Նկար 2): Արդյունքում, 2019 թվականին կիրականացվի ընդամենը 8 միջոցառում՝ ճանապարհային քարտեզով նախատեսված 38-ի փոխարեն: Այս համեմատությունը ևս մեկ անգամ վկայում է պետական մարմիններում ԵՄ

³⁵ ԵՄ-Հայաստանի տարեկան գործողությունների ծրագիր - 2016 և ԵՄ-Հայաստանի տարեկան գործողությունների ծրագիր - 2017:

³⁶ https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/taix_and_twinning_activity_report_2018_en.pdf

³⁷ https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/pipeline_update_eni_july_2019.pdf

³⁸ Համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալի թիվ 09.13.5/11590-2019 գրության:

³⁹ Պաշտոնական տեղեկատվությունը բացակայում է, իսկ այս տվյալները ձեռք են բերվել ԵՄ կայքից՝ 2019 թվականի նոյեմբերի դրությամբ (<https://webgate.ec.europa.eu/TMSWebRestrict/resources/js/app/#/library/list>):

աջակցության ծրագրերի մասին անբավարար գիտելիքի և ԵՄ աջակցության համակարգող մարմնի կարողությունների ցածր մակարդակի մասին:

Իսկ քանի որ Թայեքսը համարվում է ԵՄ հրահանգների, կանոնակարգերի ու դրանց կիրարկման փորձի ներկայացման լավագույն գործիքներից մեկը, որն անչափ կարևոր է ՀԸԳՀ հիման վրա ՀՀ օրենսդրությունը բարեփոխելու առումով, **ՀՀ կառավարության և համապատասխան համակարգող մարմնի գործունեությունը՝ Թայեքս ծրագրի կիրառումը ճանապարհային քարտեզի իրականացման առումով, կարելի է համարել ձախողված:**

Նկար 2. Հատված ԵՄ Թայեքս ծրագրի տվյալների բազայից, Հայաստանի 2019 թվականին նախատեսվող միջոցառումների մասին

Dates	Category	Title	City	Beneficiary/Partner	Keyword	Event ID
11 - 13 Dec 2019	Expert Mission	TAIEX Expert Mission on Creation of Plastic Bottles Depository System in Armen...	Yerevan	Armenia	Chapter 27	69531
10 - 11 Dec 2019	Workshop	TAIEX Multicountry Workshop on EU Plastics Strategy and Single Use Plastics	Bratislava	Turkey,North Macedonia,Kosov...	Deliverable - Connectivit...	68318
09 - 13 Dec 2019	Expert Mission	TAIEX Expert Mission on the Legislative Framework for the Protection of Biodive...	Yerevan	Armenia	Deliverable - Other inclu...	69223

- Ընդհանուր առմամբ՝ մյուս գործիքների ներքո իրականացված ծրագրերի ու միջոցառումների մասին վերջին 2 տարիների կտրվածքով որևէ ամփոփում և թարմացում չկա: Միայն, ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, 2018-2019 թվականներին ՍԻԳՄԱ-ն իրականացնում է ՀՀ հանրային կառավարման հորիզոնական ոլորտների համապարփակ ուսումնասիրություն և գնահատում՝ հիմնվելով ԵՀԲ երկրների համար պետական կառավարման սկզբունքների վրա:
- Գրեթե անհնարին է գնել նաև հստակ ծրագրեր, որոնք միտված են ՀԸԳՀ պայմանների իրականացմանն ու Հայաստանի հանձնառությունների ապահովմանը:

Եվրոպական միությունը ֆինանսական աջակցության զգալի մասը տրամադրում էր «Բյուջետային աջակցություն» գործիքի միջոցով, որի շնորհիվ ԵՄ-ն օգնում է գործընկեր պետությանը՝ բարելավելու ոլորտային պետական քաղաքականությունները, ինչպես նաև քաղաքականություն իրականացնելու կարողություններն ու ռեսուրսները: Այն ներառում է «ուղղակի ֆինանսական փոխանցումներ Հայաստանի պետական բյուջե,

որտեղ դրանք կարող են կառավարվել ազգային համակարգերի միջոցով»⁴⁰: 2007 թվականից մինչ օրս իրականացվել են բյուջետային աջակցության 11 ծրագիր: 2018-2019 թվականներին իրականացման փուլում են գտնվում չորս բյուջետային աջակցության ծրագիր (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Բյուջետային աջակցության ծրագրերը 2017-2019թթ.

Անվանում	Իրականացման ժամանակահատված	Բյուջետային աջակցության գումար
Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում	2017-2021	12մլն եվրո
Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր	2017-2019	10մլն եվրո
Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար	2017-2020	13մլն եվրո
Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը	2016-2019	15,7մլն եվրո

Աղբյուր՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Ըստ ԵՄ ընթացակարգերի՝ ծրագրերի իրականացման ընթացքում յուրաքանչյուր տարվա համար սահմանվում են նախապայմաններ և կախված երկրի կողմից դրանց իրականացման աստիճանից՝ հատկացվում է տվյալ տարվա համար նախատեսված գումարը: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (տե՛ս Հավելված 3), «ԵՄ բյուջետային աջակցության 3 ֆինանսավորման համաձայնագրերի համապատասխան հապկացումների (տրանշների) շրջանակներում 2019թ. հունվարին եվրոպական կողմից ստացվել է 8.04 մլն եվրո գումար» (տե՛ս Աղյուսակ 4): Սակայն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը իր գրությամբ անդրադարձ չի կատարել մյուս երկու ընթացիկ բյուջետային աջակցության ծրագրերին՝ «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ և արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում»

⁴⁰ <https://mineconomy.am/page/788>

և «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար», որոնց համար ԵՄ կողմից չի կատարվել և ոչ մի հատկացում⁴¹: Իսկ դա նշանակում է, որ Հայաստանը 2018 թվականի ընթացքում կա՛մ չի կատարել ծրագրերով նախատեսված նախապայմանները, կա՛մ դրանք բավարար չեն գնահատվել ԵՄ կողմից՝ համապատասխան հատկացում կատարելու նպատակով: Ընդ որում, պետք է արձանագրել, որ ո՛չ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ո՛չ էլ ՀՀ կառավարության կողմից չի հրապարակվում որևէ տեղեկատվություն բյուջետային աջակցության ծրագրերի ընթացքի, հայտնաբերված խնդիրների և դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին:

Աղյուսակ 4. Բյուջետային աջակցության ծրագրերի մասով 2019 թվականին հատկացված գումարները

Ծրագրի անվանում	Նախատեսված գումար	Հատկացված գումար
Պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր	3 մլն եվրո	2,7 մլն եվրո
Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը	2,5 մլն եվրո	1,5 մլն եվրո
Լրացում N 1-Աջակցություն ՀՀ կառավարությանը՝ ուղղված ԵՀԲ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին՝ Փուլ II ֆինանսավորման համաձայնագրում		3.84 մլն եվրո (ամփոփիչ վերջին գումար)

Ինչ վերաբերում է ԵՄ կողմից Հայաստանին տրամադրված աջակցությանը, ապա 2017-2020թթ. համար այն կազմում է 176 մլն եվրո, որից 2019 թվականի համար հատկացված 23 միլիոն եվրոն ուղղված է ՀԸԳՀ-ի բարեփոխումների իրականացմանը՝ որպես առանձին գործիք: Այդուհանդերձ, ներկայումս՝ 2019թ. վերջին եռամսյակում, դեռ որևէ հստակ տեղեկատվություն չկա, թե որ ուղղություններով են բաշխվել հիշյալ ֆինանսական ռեսուրսները, որքանով են դրանք հասցեագրել ՀԸԳՀ-ով նախատեսված մեր հանձնառությունները:

⁴¹ https://eeas.europa.eu/sites/eeas/files/factsheet_on_eu_assistance_in_armenia.pdf

Ամփոփում.

Ամփոփելով վերոհիշյալ տեղեկատվությունը, կարելի է փաստել.

- ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից բացակայում է ԵՄ հետ աշխատանքի թափանցիկությունը և հասարակությանը անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը: Պետական կառավարման մարմինների հետ **չեն անցկացվում ԵՄ աջակցության ծրագրերի մասին կարողությունների հզորացման միջոցառումներ**, ինչը ոչ միայն զգալիորեն նվազեցնում է շահառու մարմինների աշխատանքի արդյունավետությունն ու հանրային վստահությունը, այլև կարող է **բացասական ազդեցություն ունենալ այդ ծրագրերի արդյունավետ իրագործման և, հետևաբար, ՀԸԳՀ-ով ստանձնած հանձնառությունների իրականացման վրա**:
- Բացակայում է հասարակությանը հասանելի տեղեկատվությունն այն մասին, թե որ մարմինն է հանդիսանում ԵՄ աջակցության համակարգող: Մասնավորապես, իրավական տեսանկյունից այդ գործառույթներն իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Եվրամիության հետ տնտեսական համագործակցության վարչությունը, քանի որ այն սահմանված է տվյալ վարչության կանոնադրությամբ: Սակայն, հիմք ընդունելով էկոնոմիկայի նախարարության գրությունը, այդ գործառույթներն այսօր վերապահված են փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակին, որի մասին մենք **չգտանք ո՛չ որևէ իրավական հիմք, և ո՛չ էլ հանրայնորեն հասանելի տեղեկատվություն**: Ավելին, ՀՀ կառավարության կայքում բացակայում էին նաև ՀՀ փոխվարչապետի գրասենյակի համապատասխան ստորաբաժանումների կոնտակտային տվյալները:
- Անհասանելի է նաև ԵՄ աջակցության ծրագրերից ՀՀ կողմից օգտվելու տեղեկատվությունը: 2018-2019 թվականներին զգալիորեն **նվազել է պետական մարմինների կողմից եվրոպական հարևանության գործիքի ներքո տրամադրված աջակցությունից և ծրագրերից օգտվելու քանակը**, իսկ ճանապարհային քարտեզով 2019 թվականի համար նախատեսված 38 Թայեքս միջոցառումներից կիրականացվի ընդամենը 8-ը: Չի սկսվել նաև ոչ մի Թվինինգ ծրագիր, թեև դրանք նախատեսված են նաև ճանապարհային քարտեզով: Հետևաբար, **ՀՀ կառավարության գործունեությունը ԵՄ աջակցության ծրագրերի կիրառումը՝ ճանապարհային քարտեզի իրականացման առումով, կարելի է համարել ձախողված**:

ՄԱՍ 3. ՀՀ-ԵՄ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՔԱՅԼԵՐ

ՀՀ կառավարության ծրագիր

Թիրախ 1. Կառավարությունն ակտիվորեն աշխատելու է՝

- ԵՄ-ի, նրա անդամ պետությունների և Եվրոպական այլ երկրների հետ բարեկամական հարաբերությունները խորացնելու և գործընկերությունն ընդլայնելու ուղղությամբ:

Ակնհայտ է, որ ՀՀ կառավարության ծրագրի վերոհիշյալ դրույթը չունի չափելի ցուցանիշներ և հստակորեն չի ներկայացվում, թե ինչպես է նախատեսվում խորացնել հարաբերությունները ԵՄ-ի և նրա անդամ պետությունների հետ: Այդ հարաբերությունների խորացմանն ուղղված քայլերից կարելի է համարել ԵՄ անդամ երկրներ մուտքի արտոնագրերի ազատականացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Այդ կապակցությամբ փորձենք հասկանալ, թե ինչ է իրականացվում ՀՀ կառավարության կողմից այս ուղղությամբ:

ՀՀ և ԵՄ միջև վիզաների դյուրացման համաձայնագրի բանակցությունները սկսվեցին 2012 թվականի փետրվարին և արդեն նույն թվականի դեկտեմբերին ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագիրը: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի (2013թ. նոյեմբերի 12) և Եվրոպական խորհրդարանի (2013թ. ապրիլի 19) կողմից վավերացվելուց հետո, 2014 թվականի հունվարի 1-ին համաձայնագիրը մտավ ուժի մեջ: Նույն թվականին ընդունվեց նաև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը, ինչը կարևոր հիմք նախապատրաստեց նաև հետագայում ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ բանակցություններ սկսելու համար:

ԵՄ-ՀՀ վիզաների ազատականացման հաջորդ կարևոր քայլը կատարվեց 2017 թվականին, երբ հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ իրականացումը, Եվրոպական հանձնաժողովը հայտարարեց, որ հետաքրքրված և պատրաստ է վերսկսել Հայաստանի հետ վիզայի ազատականացման շուրջ բանակցությունները:

Ընդ որում, դեպի ԵՄ երկրներ վիզաների ազատականացման հարցը ամրագրված է նաև Արևելյան գործընկերության Ռիգայի (2015), Բրյուսելի (2017) գագաթնաժողովներում ընդունված համատեղ հռչակագրերում՝ «Գործընկերության առաջնայնություններ»⁴² և

⁴² https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia_partnership_priorities_0.pdf

Բրյուսելի գազաթնաժողովի կողմից հավանության արժանացած «20 արդյունք մինչև 2020թ.»⁴³ փաստաթղթում:

Ի դեպ, դեռևս մինչև 2018 թվականը, հայկական կողմը զգալի աշխատանքներ էր կատարել, ձեռնամուխ էր եղել «մի շարք կարևորագույն օրենսդրական նախաձեռնությունների», որոնք հանդիսանալու էին Եվրամիության կողմից տրամադրվելիք վիզաների ազատականացման մեկնարկի գործողության ծրագրի մասը: Եվ ինչպես ներկայացվել էր 2018 թվականի ապրիլի 10-ին կայացած ԱԺ նիստի ընթացքում, «*մենք սկսել ենք ... մեկնարկի համար նախապայման հանդիսացող բոլոր քայլերը և հույս ունենք, որ դրանք ըստ արժանվույն կգնահատվեն նաև ԵՄ-ի կողմից*»⁴⁴: Ու թեև ՀՀ կառավարությունը մինչև 2018 թվականը ձեռնարկել էր բոլոր անհրաժեշտ միջոցները՝ մուտքի արտոնագրերի ազատականացման բանակցությունների համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու ուղղությամբ և բանակցությունները հնարավորինս վաղ սկսելու նպատակով (նաև արդեն կային բանակցությունները մեկնարկելու նախանշաններ), մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսությունների մեկնարկի մասին Եվրոպական հանձնաժողովը հայտարարեց միայն 2019թ. մարտին:

Դա դեռևս իրենից չի ենթադրում բանակցությունների մեկնարկ, քանի որ մինչ այդ ԵՄ կողմից պետք է ներկայացվի և քննարկվի համապատասխան ճանապարհային քարտեզ: Թեև, ըստ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի, Հայաստանը զգալի աշխատանք է կատարել («ստորագրել ենք ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի դյուրացման համաձայնագիրը»⁴⁵) և մոտ է «համապատասխան ստանդարտներին», սակայն այդ ուղղությամբ «երկխոսություններ սկսելու համար անհրաժեշտ է և՛ ԵՄ հանձնաժողովի դրական կարծիքը, և՛ ԵՄ անդամ երկրների համաձայնությունը», որոնք, սակայն, դեռևս չկան: Ընդ որում, պետք է արձանագրել, որ նախարարի տեղակալի կողմից նշված հիմնական քայլերը (մուտքի արտոնագրի դյուրացման համաձայնագրի կնքումը, ռեադմիսիայի համաձայնագրի կնքումը, համաձայնագրով ստանձնած հանձնառությունների իրականացման նկատմամբ մոնիթորինգի իրականացման կարգը⁴⁶ և այլն) իրականացվել են նախորդ իշխանության կողմից:

Իսկ որքանով է հավանական, որ 2020 թվականից ՀՀ քաղաքացիները կկարողանան ազատ մուտք գործել ԵՄ երկրներ, ինչպես նախատեսված է «20 արդյունք մինչև 2020թ.» փաստաթղթում: Ինչպես և մյուս բոլոր երկրների դեպքում, նախքան ազատականացման ապահովումը, անհրաժեշտ է, որպեսզի մեկնարկեն դրա շուրջ բանակցությունները, ինչի համար նախ անհրաժեշտ է ԵՄ անդամ բոլոր 28 երկրների համաձայնությունը: Այսօր դեռևս չեն սկսվել այդ բանակցությունները և ամենայն հավանականության չեն սկսվի

⁴³ https://eeas.europa.eu/sites/eeas/files/swd_2017_300_fl_joint_staff_working_paper_en_v5_p1_940530.pdf

⁴⁴ <http://www.parliament.am/transcript.php?day=10&month=04&year=2018&lang=arm&view=print>

⁴⁵ https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2019/09/12/adonts_interview/9815

